№ 1 (167) XVI ՏԱՐԻ ՅՈՒՆԻՍ 1906

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

1905 – 1906

Մի խելագար թւական ապրեցինք, լի փոթորկոտ, համաշխարհային կշիռ ունեցող իրողութիւններով, ուր այնպէ՛ս հիւսւում են կօնտրաստները՝ վիշտն ու բերկրանքը, դառն, անողորմ հիասթափութիւնն ու սանձարձակ խանդավառութիւնը... Ապրեցինք անդուլ, ապրեցինք մեր բոլոր նեարդներով, մեր ամբողջ էութեամբ։ Կեանքի զարկերակը խփեց ուժգին ու յարատև, արեան Աստուածը մի վայրկեան չը դադարեց շեփորել ու շանթել, դէպքերի ահեղ գահավիժումը մի վայրկեան չընդհատուեց։

Եւ—ուշագրաւ, պատմական իրողութիւն—այս անդամ ևս, ինչպէս մարդկային ամբողջ պատմութեան մէջ, ինչպէս քաղաքակրթութեան առաջադիմութեան գրեթէ բոլոր դրւագներում՝ պատերազմն է, որ „ծնող է հանդիսանում ամեն բանի", մի մեծ ընդհարում էր՝ որ ուղղակի և անուղղակի արտադրեց այնքան նշանակալի իրողութիւններ, որ թէև արիւնոտ ու աւերիչ, թէև ինքնին մի հսկայական ոճիր՝ բայց տիեզերական էւօլիւցիայի, հանուր մարդկային աղատագրութեան տեսակէտից թերևս աւելի արգասաւոր եղաւ, քան որևէ ուրիշը պատմութեան նախորդ մեծ անցքերից։

Նա ոչ միայն մահացու հարուած տւեց աշխարհիս ամենամեծ բռնապետութեան, խլեց նրանից զինւորական գերիշխանութեան յաւակնութիւնները, որ նա ցոյց էր տալիս ծայրագոյն Արևելքում, որ նա մի օր բանեցնել էր ուզում ամբողջ Ասիայի վրայ. այդ բարերար ընդհարումը խորտակեց միահեծան բռնապետութիւնը նաև ներսում։ Առանց Մանջուրական պատերազմի, չը գիտենք, ճշմարիտ, թէ երբ կը տեսնէինք սահմանադրական, գէթ կիսաղատ Ռուսաստան։ Մի նոր դարագլուխ—անտարակոյս... Սահմանադրութիւնը իրողութիւն է, որքան էլ ուժգին ու կատաղութեամբ փչէ ռէակցիայի հողմը, որքան էլ մեծ լինի նրա տարածած աւերն ու սարսափը։

Եապօնական զէնքի յաղթանակներն էին, անշուշտ, որ առաջին հզօր խթանը եղան Ռուսաստանի յեղափոխական շարժմանն։ Դեռ անցեալ տարւայ յունւարին, երբ Պօրտ-Արտուրի անկման շշմեցուցիչ լուրը հաղորդուեց արձագանքներով շառաչեց կայսրութեան բոլոր անկիւններում- սկսւեց ուժգին, չը տեսնուած, փրկարար խմորումը, որ բռնկւեց բանւորական հոյակապ մի ցոյցի ձևով, Գապօն քահանայի առաջնորդութեամբ, արքայանիստ Պետերբուրգում, հէնց Ձմերային պալատի առաջ։ Ցայտնի է այդ անդրանիկ, մեծ յեղափոխական քայլի ողբերգական վերջաւորութիւնը...

Սակայն, առաջին զարկը տրւած էր արդէն, շարժումը այնուհետև գնաց crescendo, յարաճուն թափով, գնաց խորութեամբ և տարածութեամբ, նա անցաւ մայրաքաղաքից դէպի գաւառները, իսկ Ծայրերը վաղուց արդէն բռնկւած էին... Ուժգին խլրտաց ռուս զօրքն անգամ, բռնապետութեան ամենամեծ պատաւարը։ Նա շատ տեղերում բացարձակ ըմբոստութեան նշաններ տւեց, իսկ Սև ծովի վրայ մի ամբողջ զրահանաւ ութ օր շարունակ ծածանեցրեց Յեղափոխութեան կարմրագոյն դրօշը...

Կամարիլլան զգաց, որ իր օրհասը մօտ է և ինքն էլ թափ առաւ, սկսեց մի անսիրտ ռէակցիա յեղափոխութեան դէմ, խտրութիւն չը դրեց միջոցների մէջ և անլուր, քստմնելի արարքներով ցաման ճիչեր պոկեց քաղաքակիրթ մարդկութեան շրթունքներից։ Նա կազմակերպեց հակայեղափոխութիւնը դիւային հանճարով, զուտ կօղակային մեթօդով. պօլիցիական ամենավայրագ հալածանքների հետ միաժամանակ՝ նետեց ամեն տեղ, ուր հնարաւոր է, ազգաբնակութեան կոյր, անգիտակից, յետադէմ տարրը խաղաղ, առաջադէմ տարրերի վրայ և Բարդողիմէոսեան գիշերներ սարքեց հրէաների, հայերի, Նոյնիսկ ռուսների մէջ։

Եւ այնուամենայնիւ ազատարար հոսանքը անշեղ գնաց իր ուղղութեամբ, ճեղքեց բռնակալութեան կանգնեցրած թումբերը և կիսով չափ յաղթանակեց։ Մի հսկայական գործադուլ, որ միացրեց երկրի բոլոր ծայրերում հարիւր հազարաւոր բանւորներ, փոստի ու երկաթուղու ծառայողներ, մանր առևտրականներ ու գիւղացիներ, ինտելիգենտ տարրեր և այլն—տւեց վճռական հարւածը և միահեծան բռնակալութեան շէնքը ճարճատիւնով սկսեց փլատակւել։ Դիպլօմատ Վիտէն, որ քիչ առաջ կնքել էր Պօրտսմուտում ռուս-եապանական խաղաղութեան դաշինքը և տարել էր թշնամու դէմ մի „փայլուն յաղթութիւն", ուս յե-

տադէմ մամուլի կարծիքով, —quasi-ազատամիտ Վիտտէն, իր ձեռքն առնելով կառավարութեան ղեկը և տեսնելով երկիրը անօրինակ ճգնաժամի մէջ, անիշխանութեան ու քայքայման գագաթին հասած՝ թելադրեց սարսափահար վեհապետին մի քիչ աւելի առաջ գնալ նախորդ խոստումներից և ստորագրել տուեց սահմանադրական ռէժիմի մի քանի հիմնական սկզբունքները: Կամարիլլայի ամենախոշոր դէմքերը՝ Պօբէդոնոսցէվ, Տրեպով, մեծ իշխան Վլադիմիր և այլն՝ հրաժարական տուին:

Մի մեծ յաղթութիւն՝ որ սակայն անմիջապէս մը-ռայլուեց, նսեմացաւ գազանային հէկատօմբներով... Դարձեալ խրոխտ գլուխ բարձրացրեց Սև-հարիւրակը, դարձեալ Բարդուղիմէոսեան գիշերներ: Այն ինչ՝ սահմանադրական խոստումները իրագործման նշոյլ չէին ցոյց տալիս,—Վիտտէն անվերջ տարուբերումու յապաղումէր...

Ահա այդ միջոցներում պայթեց երկրորդ գործադուլը,—այս անգամ անպատրաստ, վարանոտ, անաջող —որին հետևեց զինուած ապստամբութիւն Բալտեան նահանգներում ու Մայր-Մօսկուայում: Արդիւնքը—փոքրիկ, յուսախաբութիւնը—մեծ: Յեղափոխական կազմակերպութիւնները չափից աւելի էին գնահատել իրենց ուժերը, չափազանցրել էին գործադուլի բանակի դիմացկանութիւնը և ըստ երևոյթին, յոյսեր էին դրել նաև զօրքի վրայ: Գործադուլը երկար չը դիմացաւ, համերաշխութիւնը թոյլ էր զանազան տարրերի մէջ, իսկ զօրքը ամեն տեղ կանգնած մնաց իր „կոչման բարձրութեան վրայ“ և անողորմ մասսային ջարդերով, թէպէտ և ահագին դժուարութիւններով, ճնշեց զինուած ապստամբութեան առաջին խրոխտ արտայայտութիւնները:

Բռնակալութիւնը նորից սիրտ առաւ: Զիջողութեան տրամադրութիւն նա առ այժմ չի ցոյց տայ այլ և, Դուրնովո-Վիտտէան դաշնակցութիւնը գուցէ նոյ՛ն իսկ աշխատէ կրճատել յայտարարուած սահմանադրական իրաւունքները... Սակայն, անհնարին է որոշ բան գուշակել նոյնիսկ մօտիկ ապագայի համար, մի երկրում, ուր ամեն օր նոր ու ահեղ անակնկալներ են պայթում: Մի բան պարզ է, այն՝ որ վերադարձը դէպի հին ռէժիմը այլ ևս բացարձակ անկարելիութիւն է: Բռնակալութիւնը չէ կարող ապրել՝ միայն սպանելով, նա դրանով իսկ փորում է սեփական գերեզմանը: Երկիրը տնտեսապէս իսպառ քայքայուել է, ֆինանսական տագնապը ծայր է տալիս արդէն և Պարիզի բանկերն անգամ դժուարանում են անել ցարի կառավարութեանը՝ նոր փոխատուութիւններ...

*

Ցայրագոյն Արևելքի մեծ դրաման գրեթէ իսպառ մոռցնել էր տուել մերձաւոր Արևելքը: Այնուամենայնիւ, արևելեան խնդրի հանգոյցը ևս փոքր ինչ տրորուեց, բացուեց: Մակեդոնեան ստացաւ, Անգլիայի ջանքերով, մի կարևոր ռէֆօրմի իրական երաշխաւորութիւն: Եւրոպական համերգը, թէև անկատար ու վարանոտ, կարողացաւ արհամարհել սուլթանի յամառ ու յարատև դիմադրութիւնը և նաւային ցոյցի միջոցով ընդունել տուեց եւրոպական ելմտական կօնտրօլը Մակեդոնիայում: Դա խնդրի լուծումը չէ, ի հարկէ և մակեդոնական ռազմի բանակը այսօր միացած՝ պատրաստութիւններ է տեսնում նորից ապստամբութեան դրօշը պարզելու հայրենի լեռներում:

Տաճկահայ ժողովրդի համար այս տարին ևս անցաւ ապարդիւն, առանց որևէ թեթևութիւն բերելու: Երկիրը ընդհանրապէս խաղաղ մնաց—խաղաղ, ի հարկէ համիդական մաքով: Մանր ու խոշոր հարստահարութիւններն ու հալածանքները շարունակուեցին: Երկիրը „հանգիստ“՝ ծայրերը ցնցուեցին: Կ. Պոլսում, Եըլդըզի մօտ և Զմիւռնիայում տեղի ունեցան դէպքեր, որոնք վճռական ազդեցութիւն կարող էին ունենալ թիւրքպետութեան ու միջազգային քաղաքականութեան վրայ՝ արևելեան հարցի նկատմամբ, եթէ չը վիժէին: Յուլիսի 22-ին սուլթանական մզկիթի մօտ, դժոխային մեքենայի միջոցով սպանութեան փորձ եղաւ Աբդիւլ Համիդի դէմ,—ամենալուրջ փորձը, որ երբևիցէ կատարուել է նրա գահակալութեան օրից ի վեր: Տասնեակ մարդիկ զոհ գնացին, սուլթանը ճողոպրեց...

1905-ը աղէտի թուական էր հայութեան համար, ոչ պակաս դժբախտ, քան 1895-ը: Քանի՛ քանի յոյսեր իդերև ելան, քանի՛ ծրագիրներ խորտակուեցին...Մի կողմից, ճիշտէ, բռնակալութեան անցեալ մի քանի ոճիրները մաքրուեցին նոյն բռնակալութեան ձեռքով — վերադարձրին հայ եկեղեցական դոյքերը և վերաբացեցին հայ դպրոցները, բայց միւս կողմից—նոր փորձութիւններ, նոր պատուհասներ:

Թուրքական արշաւանքը, Կովկասում, մի սև էջ ևս աւելացրեց մեր բազմատանջ ժողովրդի պատմութեանը: Լանկեթամուրը վեր բարձրացաւ գերեզմանից և աղեխարշ տեսարանների մէջ վերստին փորձեց յագուրդ տալ վրէժխնդրութեան անյագ ու ատավիկ ծարաւին: Հին, դժնդակ ուրուականն էր, բոլոր վայրագ ուժերի մարմնացումը, որ կրկին անգամ գրոհ էր տալիս փոքրիկ, պատմական ժողովրդի դէմ, որը դարերից ի վեր քաղաքակրթութեան դրօշն էր հակադրել այդ մռայլ ուրուականին...

Կովկասեան կօշմարը մի փորձաքար եղաւ հայ ժողովրդի համար,—նա ճանաչեց իր իսկական թշնամիներին ու բարեկամներին. թշնամիներ որքա՜ն շատ, բարեկամներ այնքա՜ն քիչ... Ամենուրեք կոյր նախանձ, ծով ատելութիւն, ամենուրեք ատամների կրճտոց՝ հայի կուլտուրական ընդունակութիւնների, անգամ նրա գոյութեան առթիւ... Մի անողորմ դաս, որ ապարդիւն

չի անցնի. մի զարհուրելի վիճակ, որ հրահանգում է փարել ինքօգնութեան և միայն ինքօգնութեան դրօշակին և մնալ միշտ կազմ ու պատրաստ՝ ճակատագրի փորձութիւններին պատուով ու աջողութեամբ դիմաւորելու համար... Դասը տալիս է արդէն ցանկալի արդիւնքը. հայ ժողովուրդը բարձրացրել է խաւար ու ժերի նետած ձեռնոցը և այսօր, իր մարտական կազմակերպութեան շուրջը համախմբուած, կուում է թշնամիների ճնշող բազմութեան դէմ: Բոլէն լի է մահասարսուռ խորհրդաւորութեամբ. երբէք թերևս ճակատագիրը այսքան անագորոյն խաղ չէ խաղացել...

Սակայն, դրա հետ միասին—այդտեղ է ուշագրաւ հակասութիւնը կեանքի—դրա հետ միասին՝ կենդանարար արշալոյսի ցոլքն ենք տեսնում մեր նահատակ երկրի մէջ: Ճարակող հրդեհների լուսավառութեան մէջ, կուի ու ջարդի, լաց ու կականի հսկայական ժխորի միջից այսօր արարատեան հայ աշխարհում, առաջին անգամը նրա բազմադարեայ գոյութեան ընթացքում, խրոխտ ելևէջներով արձագանքում է ս ա հ մ ա ն ա գ ր ա կ ա ն ա զ ա տ ո ւ թ ի ւ ն ը, որ համայն Ռուսաստանի ըմբոստացման բուռն յորձանքը իլեց միահեծան գահակալից:

Կովկասը այսօր կուում ու միանգամայն տօնում է նուաճած ազատութիւնը: Հին ռէժիմի սարսափները, կեղտն ու ժանգը կը վերանան, հայի ճակատից էլ մռայլը կ'անցնի և նա հպարտ իր կոչումով, քաղաքակրթութեան ու ազգերի հաւասարաշխութեան դրօշը գբրկած՝ նոր թափ կ'առնէ ազատ ռէժիմի տակ ու թափ կը հաղորդէ նաև իր արիւնի եղբայրներին, սահմանից այն կողմ, որոնց ճակատագրի վրայ ուղղակի և անուղղակի պիտի անդրադառնայ ռէժիմի փոփոխութիւնը Պետերբուրգում ու Անդրկովկասում:

Հ. Յ. Դ ա շ ն ա կ ց ո ւ թ ի ւ ն ը, նոր տարեան թեւակոխելիս, կարող է հպարտ վստահութեամբ ասել, որ գործակցութեան իր բաժինն ունի նախորդ տարւայ մրրկալի պայքարների մէջ: Մի կողմից բռնուած յեղափոխական աշխատանքով Ցաճկաստանում, միւս կողմից թաթարական հօրդաների դէմ մղած անդադրում կռիւներով՝ Դաշնակցութիւնը, այնուամենայնիւ, համաձայն Պարիզի ու Ժընէվի միջկուսակցային խորհրդաժողովներում տրուած հանդիսաւոր յանձնառութիւններին, պարզեց իր դրօշակը, հրապարակ հանեց իր մարտախմբերը նաև ռուսական բռնապետութեան դէմ, ձեռք ձեռքի տուած Կովկասում գործող այլ կազմակերպութիւնների հետ:

Բայց „Դաշնակցութեան" գլխաւոր կռիւը հ ա կ ա յ ե ղ ա փ ո խ ո ւ թ ե ա ն դէմ էր, և այդտեղ նա թափեց անքաւ եռանդ, այդտեղ նա տուեց անգնահատելի զոհեր, որոնք արժանի էին աւելի բարձր, աւելի վսեմ մի գործի... Բախտի չարաշո՛ւք տնօրինութիւն: Չը լինէր Թուրք մասսայի այդ հակայեղափոխական, եղբայրադաւ ըմբոստացումը՝ մենք ուրիշ կերպ կը ծառայէինք Կովկասի ազատագրութեան գործին և փոքրիկ Գուրիան մենակ չէր պարզի զինուած ապստամբութեան դրօշը...

Զոհե՞ր, զոհեր... Սարսափելի, անողորմ փորձութեան մի թեւական էր մասնաւորապէս „Դաշնակցութեան" համար: Մեռելներ կան, որոնց պատճառած սուգը չի նսեմանում անգամ ժողովրդական համատարած աղէտների առաջ: Եթէ մի կողմից հայ ժողովրդի պաշտպանութիւնը, որ այնքան կրօվի կերպով իրենց ձեռքն են առել մեր ընկերները և որ այսօր հիացմունքի ու երախտագիտութեան ցոյցեր է յարուցանում Անդրկովկասի ամբողջ հայութեան մէջ,—եթէ մի կողմից այդ բոլորը լցնում է մեր սիրտը մի հպարտ ուրախութեամբ, ապա միւս կողմից՝ մենք ամեն անգամ անփարատելի վշտով ենք համակւում, մտածելով այն մեծ կորուստների մասին, որ մեր կազմակերպութիւնը ունեցաւ անցեալ տարւայ ընթացքում, թէ Թուրք-հայկական անմիտ կռիւներում և թէ ուրիշ ձեռնարկների մէջ, Կովկասից դուրս,—կորուստներ, որոնց թանկագին, նուիրական շարքերում առանձին վեհութեամբ բարձրանում է „Դաշնակցութեան" առաջնորդի, մեր անմոռանալի, անզուգական Քրիստափորի կերպարանքը:

Ցարգա՞նք նրանց: Կեանքի անիւը պտտւում է անսովոր արագութեամբ, արիւնոտ դէպքերը իրենց տենդային գահավիժման մէջ, նոր-նոր բացւող դամբարանները՝ ժամանակ չեն տալիս անդրադառնալու մեր պաշտելի հանգուցեալների վրայ և մենք ստիպւած ենք թռուցիկ կերպով միայն յիշատակել... Ցարգա՞նք նրանց: Հեռո՛ւ վանենք վիշտն ու վհատութիւնը նոր կեանքի նախատօնակին, նրանց պէս վառե՛նք ռազմի կրակով, նրանց պէս տոգորե՛նք գաղափարի վերջնական յաղթութեան գիտակցութեամբ, նրանց պէս արհամարհե՛նք վտանգն ու կուի խոչընդոտները և յամառ, անվկանդ պայքարի մէջ խոր ըմբռնենք, որ այսօր, այս դժոխային օրերում, հայութեան այս բացառիկ ճգնաժամի օրերում, ամենահրամայական, ամենաստիպողական պահանջն է—ապրեցնել հայ ժողովրդին:

„ԴՐՕՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՈՒՂԱՐԿԻԱԾ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ)

ԹԻՖԼԻՍ, 6 | 19 յունուար.

Թիֆլիսը պաշարման վիճակի մէջ է: Ալիխանով նշանակւած է զեներալ-նահանգապետ: Ձերբակալւեցին 218 հոգի պատկանող այլ և այլ սոցիալիստ ու յեղափոխական կազմակերպութիւնների: Նրանց թերթերը փակեցին: Երևան-Բազու երկաթուղային գծի հսկողութիւնը յանձնւած է թուրքերին: Վրաստանը լուրջ յուզումների թատր է: Արիւնալի ընդհարումներ են տեղի ունենում: Հայ-թրքական կռիւները շարունակւում են, միշտ խրախուսւած կառավարական ռէակցիայից: Երևանում առերևոյթս խաղա-

զութիւն է։ Գանձակի դաշտի վրայ Բաղաքենդ, Գետաբեկ հայ գիւղերը աւերուած են։ Հայերը իրենց կողմից քար ու քանդ արին թրքական մի շարք գիւղեր՝ Շայլուլար, Բալչլու, Թոփալհասանլու, Քերվենդ, Ումուտլու և այլն։ Ղազախի Թուրքերը պաշարեցին չորս հայ գիւղ, բայց կորուստով յետ մղեցին։ Երեք թուրք գիւղեր թալանեցին։ Կռիւը տակաւին շարունակւում է. թուրքերը աղերսում են կառավարութեան՝ օգնութիւն ղրկել իրենց։ Խանարադ և Խրամորթ հայ գիւղերի վրայ ևս թրքական յարձակում եղաւ։ Մեր խմբերը նորից զրաւեցին Անկերանի կիրճը, կտրելով հաղորդակցութիւնը Շուշու թուրքերի հետ։ 72 թուրք ֆուրգօններ ընկան հայերի ձեռքը։ Զօրքերը գնացին թնդանօթներով՝ մերոնց Անկերանից դուրս մղելու նպատակով։ Քրդերն ու թուրքերը յարձակեցին նաև Ղալադարասսիի վրայ, բայց հայերը յաղթանակով յետ մղեցին։

—

ԹԻՖԼԻՍ։ 12 25 յունուար.

Յունուարի 6-ին 2000 թուրք, 1000 ձիաւորի հետ արշաւելով Պարսկաստանից, յարձակեցին Խարմարդի (՞), Վարազաբոյնի, Նախիջևանիկի, Փրջամալի վրայ։ Կռիւը տեւեց 6 ժամ։ Թուրքերը յետ մղեցին, տանելով իրենց հետ մեծ թիւով դիակներ ու վիրաւորներ, այն ֆուրգօնների մէջ, որոնք բերուած էին՝ սուարը բարձելու համար։ Հայերի կողմից սպանուած են 8 տղամարդ, 4 կին և վիրաւորուած են 9 հոգի։ Կառավարութիւնը անգործ է։ Հայերը իրենց կողմից յարձակեցին Կարաբիլինի վրայ։ այդտեղ թուրքերը տուին 150 զոհեր, հայերը 9 սպանուած և 6 վիրաւոր։ Զարտախլուի մօտ հայերը քար ու քանդ արին Սօզութլու գիւղը։

Անցոյս 9-ին Նախիջևանում՝ նորից հրացանաձգութիւն։ Այնտեղ սպասւում են գինուած թուրք խմբեր Պարսկաստանից։ Յունուար 7-ին՝ նոր ընդհարում եղաւ Սիսեանում, այնտեղ սպանուեց մեր խմբապետ Ռուբէն Ստեփանեանը, իր 4 ընկերների ու 17 գիւղացիների հետ. թուրքերի կորուստը—190 մարդ. թուրք ազգաբնակութիւնը՝ հայ յարձակողական արշաւանքից շշմած՝ տրամադիր էր հաշտութիւն խնդրել, բայց այժմ խրախուսուած կառավարութիւնից՝ նա նորից ռազմական դիրք է բռնում։ Կառավարութիւնը պատրաստներ է փնտրում՝ հայերին գինաթափ անելու։

ՀԱՅՈՐԴԻՆԵՐԸ

Ը

ԳԱՐԵՐՈՒ ՎՐԷԺ

ԶՕՆ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՏԱՄՆԵՒՀԻՆԳ ԱՄԵԱԿԻՆ

«Յոյսերու երկաթէ սանդուխին կատարներէն է որ Աւետիսս կ'արձակեմ,
Մոխիրներու, դիակներու և վշտերու հովիտներէն է որ հասայ ի քեզ,
Եւ աւա՜ղ քրամիդիս թեզանիքներէն իմ շքեղ ցեղիս արիւնը անաւասի՛կ դեռ կը թորայ...
Բայց քայլերս անխոնջ են և կամքս զերազօր և ձայնս դաժանօրէն ամեհի...
Գլուխս սուզերէն և վրէժէն և ճակատագրէն թէև ալեհեր,
Բայց, տե՛ս, աչքերս դիւցազնի մը աչքերուն չափ կարմիր և կերպարանքս է սոսկատեսիլ։
Իմաստութեանս և ցասումիս արեգակին տակ իմ հուժկու իրանս անկիւնաքար,
Այլևս չուզեր այդ սնոտի փառքը յաւերժօրէն իր վրայ կրել։
Եւ պաղատանքի, աղօթքի, լացուկոծի և ողբի այն մատեաններուն մէջ,
Որ դար առ դար իմ սերունդներս իրենց արիւնը և տառապանքն են լացեր,
Մէկ կողմ նետեցի ես զանոնք, պարտութենէ ստրկացում և աղաչանքէ արցունք չերթալու համար...
Եւ մտածումովս և զայրոյթովս ծեր ցաւերուն ամենախոր արմատները չափեցի,
Տեսա՛յ որ ծեր փրկութիւն մուրացողի բոպիկ ոտքերն աւերակներու մոխիրներէն այրեցան...
Տեսա՛յ որ դուք արցունքին մէջ երջանիկ էիք և կենսարեր կռիւին դէմ անաբեկ...
Տեսա՛յ որ արդարութիւնը ստեղծել պէտք էր և ազատութիւնը մոլեգնաբար յափշտակել։
Եւ այսօր, անաւասի՛կ, իմ անկշռելի բարկութիւնս իր բոլոր հուրերը վառեց...

«Ահա՛ քեզ ալ կը դիմեմ, եկո՛ւ և ճամբուս վրայ ոտքի՝ երգէ՛ որ արձակե՛մ,
Ճամբուս վրայ ռազմերգէ՛ որ քինայոյզօրէն և առյաւէտ արձակե՛մ
Իմ հաւատքի զաւկրներուս վայրենալանջ երիվարները փոթորկապար...
Ըսէ՛ որ գաղափարիս փարոսները հրդեհեմ չորս ծագերուն դիմաց,
Ըսէ՛ որ թաւալե՛մ ապառաժներուս կոյտերը անիրաւութեան կուրծքերուն,
Եւ ոտքի հանեմ հողիս հրեղէն և ըմբոստ մարտիկներուն հետ,
Քինախնդրութեան և սարսափի բանակներուս արշաւանքն ալ ահեղաշար...
Ըսէ՛ որ շեփորներս հինաւուրց հերոսներու հագագովը շեփորել տամ...
Ըսէ՛ որ երկաթներս կռանեմ և պողպատներս շողացնեմ,
Ըսէ՛ որ ես ալ իմ արիւնախում նժոյգս շքեղօրէն թամբեմ,
Ըսէ՛ որ սնոր սմբակներր ծորերէն վեր՝ լեռնէ ի լեռ միայն կայծեն...

Երգէ՛, ահա՛, բոլորին արիւնը ալև է դարձեր և կամքերն ու դաստակներն է պղնձուեր,
Երգէ, Եղբայրութիւնը տօնուեցաւ և շունչերն ու հոգիները նոյն դարերու վրէժովը պսակուեցան...
Ահա՛ թափուող արցունքները յե՛տ դարձան և կուրծքերու կոծումը դադրեցաւ,
Ահա՛ բոլորը մէ՛կ, բոլորը մէ՛կ, իմ Գերիշխանի թևերուս տակ յառաջացան.
Արբեցո՛ւր զանոնք դեռ, եթէ կրնաս, և արժանաբար դիւցազներգէ՛ զիս, ո՞վ քնարաւոր,
Ես գիտեմ որ քու տաւիղդ Հայրենիքին ծարաւն ունի ինչպէս վրէժն այնքան դարերու...
Ուրեմն լարերդ զենիթին շանթերէն յափշտակէ, տրցակ առ տրցակ,
Բարձրացո՛ւր ծեռքերդ և զանոնք գիշերուան կապոյտներու կամարին կարկառէ՛,
Եւ փառազարդէ գլուխս առաւօտեան աստղերու բոյլով մը լուսածոր,
Խնկարկէ՛ զիս և անմահութեան տաճարներուն էն փառակերտը կառուցո՛ւր,
Ծնրադրէ՛ և պաշտէ՛ զի՛ս և երբ ժամը հասնի ողջակիզուէ՛ ինծի համար,
Եւ փշրէ՛ քու հողեղէնի ճակատդ իմ կոթողիս մարմարներուն դիմաց,
Որովհետև, ես ե՛մ, ես ե՛մ, ես ե՛մ, իմ անունս է Պայքար և վախճանս Ցաղթանակ»։

ՍԻԱՄԱՆԹՕ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՐԻՒՆԱՀԵՂ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

III

Միամտութեամբ կամ չարամտութեամբ սխալւում են նրանք, որոնք պնդում են, թէ նաւթաշրջանի ամբողջ արդիւնաբերութիւնը հայերի ձեռքումն է, թէ „ամբողջ բուրժուազիան—հայերն են“։ Պետերբուրգից և արտասահմանից յատուկ միսսիայով դրկուած թղթակիցները իրենց անաչառ ուսումնասիրութիւններով հերքեցին այդ ըմբռնողութիւնը եւ, հաստատելով՝ որ հայ արդիւնաբերող պատրանի կողքին կանգնած են թուրք, ռուս ու եւրոպացի պատրոններ, որ ընդամենը երկու խոշոր հայ ընկերութիւնների հետ—Մանթաշեան, Կասպեան—գոյութիւն ունին երկու նոյնքան խոշոր թուրք ընկերութիւններ և երկու անհամեմատ աւելի խոշոր օտար ֆիրմաներ—Նոբէլ, Ռոտշիլդ,—որ հայկական արդիւնաբերութիւնը նաւթային աշխարհում կազմում է ընդհանուր արդիւնաբերութեան հազիւ մէկ երրորդը, որ թուրք կրեատները ամբարած են ու անշարժացրած իրենց ամրակուռ անդուկների մէջ դրամական ահռելի հարստութիւններ, որոնց համեմատութեամբ չնչին է հայերի դրամագլուխը, որ թուրքական այդ հարստութիւնները ստեղծուած են հայոց աշխատանքով, որ սոնր առևտուրը, վաճառականութիւնը նոյն շրջանի մէջ կենտրոնացած է գրեթէ բացառապէս թուրք տարրի ձեռքում, որ թուրքի ձեռքումն են և քաղաքի տները և լայնատարած նաւթահողերը,—հարստութեան այդ անպատաղբիւրը և այլն և այլն։

Ո՞ր է ճնշումը։ Ի՞նչն է այնպիսի յուսահատական ճիչեր թռցնում թուրք կրեատների և նրանց իդէոլոգների նախանձոտ սրտից։ Ի՞նչն է, որ բոլոր հայատեացներին բոցավառում է վայրենի կրքով ու հրապարակ նետում անմիտ, ամարդի նշանախօսքը՝ „հայ կապիտալը—ահա՛ թշնամին“։

Դա այն չէ, ընթերցող, որ իբր „ամբողջ բուրժուազիան Բագուում հայերն են“—անարժան մի սուտ, որ դժբախտաբար գալիս է ռուսաց սոցիալ-դէմոկրատներից—դա այն չէ, որ երբ թէ թուրքը զգում է իր կաշի վրայ կամ հոգու խորքում հայի տնտեսական ճնշումը, այլ դա այն է՝ որ հայ „եկեւոր“ *) տարրը, կարողացել է 30—40 տարուայ ընթացքում, իր նախաձեռնութեան, ընդունակութիւնների շնորհիւ, պատկառելի դիրք գրաւել նաւթային աշխարհում, որ հայը ընդհանրապէս դժբախտութիւն ունի հանդիսանալ, իբրև խոշոր կուլտուրական ուժ արդիւնաբերական կեանքի բոլոր առպարէզներում, որ նա թափանցում է միշտ աւելի և աւելի տուար թւով ինդուստրիական, առևտրական, բանկային ու այլ հաստատութիւնների մէջ, որ այնպիսի խոշոր հիմնարկութիւններ, ինչպէս են նաւթարդիւնաբերողների խորհուրդը, Բօրսային մարմինը, Տեխնիկական ընկերութիւնը՝ գլխաւորապէս հայերի ձեռքում են, (ոչ աք, ի հարկէ, չէ արգելում նաև թուրք տարրին՝ բազմացնել իր ձեռնարկութիւնները և իր տուար ներկայացուցչութիւնն ունենալ այդ հիմնարկութիւնների մէջ), որ հայ կապիտալը, ակտիւ, շարժուն ու նախաձեռնող, նեաւում է նորանոր ձեռնարկների մէջ, մինչդեռ թրքական ահագին դրամագլուխները կամ անշարժ մրափում են, կամ թէ բռնուած են ոսոկ վաշխառուական գործողութիւններով, հանդիսանալով էապէս ապեկուլատիվ մի ուժ, հակառակ նորագոյն կապիտալիզմի և տնտեսագիտութեան օրէնքներին. որ թրքական վաղեմի տիրապետութեան այդ կենտրոնում „եկեւոր“ հայը շինում է գործարաններ, բարեգործական ու այլ հասարակական հիմնարկութիւններ, հիմնում է մամուլ, ստեղծում է ամբողջ մտաւոր մթնոլորտ, գրաւում է ազատ պրոֆէսիօնների ընդարձակ տապարէզը, տալիս է բժիշկներ, ինժիներներ, փաստաբաններ, որ հայը, մի խօսքով հանդիսանում է պրօգրէսի մի խիստ անդուլ, բեղմնաւոր առաջադիմութեան ներկայացուցիչ, մինչդեռ թուրքը արևելեան անշարժութեան կնիքն է կրում յաւիտենապէս և այլն և այլն։

Այդտեղ է ահա հայկական անիծեալ „ճնշման“ գաղտնիքը, այդտեղ է թուրք տարրի, թուրք խուլիգան „ինտելիգենցիայի“ ու „հասարակութեան“ դժգոհութեան պատճառը։ Բայց այդ պատճառը բացառապէս, նոյնիսկ գլխաւորապէս տնտեսական չէ,—ինչո՞ւ խեղդմիւրել բառերի իմաստը—և այդ „ճնշումը“ տեղական չէ ու դասակարգային չէ։ Նա գոյութիւն ունի ոչ միայն նաւթային մայրաքաղաքում, այլ բովանդակ Անդրկովկասում,—բոլոր վայրերում, ուր խառն ապրում են հայ և թուրք տարրը։ Ոչ, այդ չարաբաստիկ „ճնշումը“—որքան

*) „Եկեւոր,, բառը, որով թուրք օսմինիսս „նուապարակախօսը“ սիրում է արհամարհոս ճեշտով յատկանշել հային, նրա մաղամացիական իրաւասութիւնը ժխտելու համար՝ ինքնին անմիտ մի արտայայտութիւն է... Թուրքերը չեն, յամենայն դէպս, հոգի առաջին զրաւողները Կովկասի այս կամ այն անկիւնում. ո՞ւրտեղ էին նրանք մինչեւ Կովկաս գալը...

էլ խրթ հնչէ ճնշում բառը խեղճ, հալածական մի ժողովրդի դիմաց — յատուկ չէ սահմանափակ մի շրջանի։ Նա, ըստ երևոյթին, հայի բնութեան մի յատկանիշն է, նրա էութիւնից անբաժան մի տարրուռ։ Չէ՞, Թիւրքահայաստանում ևս հայը, ասում են, ճնշող տարր է, նա ճնշում է քրդին, տաճկին, եզիդին... Չէ՞, սուլթանական ռէժիմի տակ անգամ թշուառ ժողովուրդը հանգստութիւն չունի ոգէտ ու հայատեաց „թէօրետիկոսների“ ձեռքից... Նա պիտի ջնջի կամ իսպառ բթանայ, պիտի կորչի նրա մէջ գործունէութեան ամեն յատկութիւն, կեա՛նքի ամեն աղամ, նրա բոլոր օրգանները պիտի անդամալուծուին, տարօրինի ենթարկուին, ընդմիշտ պիտի մարի առաջադիմութեան մշտավառ ջահը, որ այդ վիրաւոր ժողովուրդը դարերից ի վեր անվկանդ տոկունութեամբ կրում է ասիական խաւարի միջից, նա պիտի նմանի, պիտի հաւասարուի իր շրջապատին, այն ժամանակ միայն խաւարամոլ մարդատեացները կը հանգստանան, կը դադարեն ատել բազմատանջ նահատակին, կը սիրեն նրան...

Այո՛. Թուրքը, ինչ դասակարգի ու պրոֆէսիոնի էլ պատկանէ նա, բնազդմամբ ատում է իր կուլտուրական հարևանին ընդհանրապէս, ոչ միայն արդիւնաբերողին ու առևտրականին։ Միմիայն հայ կապիտալիստը չէ, որ բարձր է թուրք կապիտալիստից իր կրթութեամբ ու ըմբռնումով, բարձր է և հայ աշխատաւոր դասը՝ արհեստաւորը, գիւղացին, պրոլետարը՝ իր վարժութեամբ ու յարաբերական գրագիտութեամբ, իր յափշտակութեամբ՝ գաղափարական հոսանքներով, բարձր է, ի՞նչ խօսք, և միջին հայ ինտելիգենտը իր համապատասխան էլեմենտից թուրք ժողովրդի մէջ և այդ տարաբախտ բարձրութիւնը — որ ինքն ըստ ինքեան հպարտանալու տեղիք չէ տալիս հային, քանի որ այնքա՛ն, դրժբախտաբար, ցած է կանգնած նրա ճակատագրի լծակից դրացին — այդ բարձրութիւնն է՝ կուլտուրական և ոչ լոկ տնտեսական՝ որ սաստկապէս անդրադառնալով թուրք ղեկավարող դասակարգերի մտածողութեան վրայ, աղբիւր է դառնում այնքան թունաւոր ատելութեան, հակամարտութեան և որ թերևս ներշնչում է պանիսլամիզմի հովերով տարուած խուլիգան état major-ին յանցաւոր մտքեր, խիզախ, ուտոպիական մի ծրագիր — դուրս մղել (՞) բնութեամբ ատելի հակառակորդին, ջնջել կամ գաղթեցնել նրան՝ հեռո՞ւ „մուսուլմանական նահանգներից“, հեռո՞ւ թուրքական (՞) „հայբենիքից“...

Որտե՞ղ կը գտնէք նման կայութիւն։ Եւ ո՞վ է մեղաւոր, որ հայը համեմատաբար բարձր տիպ է քաղաքակրթութեան. ո՞ր լոգիկայով կը բարեհաճէք արդարացնել այն հաւաքական և դիտակից ոճրագործին, որը բիւրօկրատ-դահիճների հետ միաբանելով, հոկայական մի դաւ է նիւթում դրացի խաղաղ ժողովրդի դէմ, լոկ այն պատճառով՝ որ չէ հանդուրժում նրա մտաւոր, քաղաքակրթական գերազանցութիւնը։

Ո՞ր օրինագիրը, ո՞ր իրաւական կամ բարոյական կոդէքսն է հրահանգում՝ հաւաքական որսախուճապ կազմակերպել մի ազգի վրայ, անգամ՝ եթէ նա ամբողջապէս բաղկացած լինէր գծուծ, արծաթասէր չարչիներից, անգամ՝ եթէ նա նիւթական հարստութեան անյագ տենչով, բայց և խաղաղ, օրինաւոր մրցակցութեամբ, լոկ իր ներքին կարողութիւնների վրայ յենուած՝ իրօք գրաւէր ամբողջ երկիրը, հասնէր տնտեսական միահեծան տիրապետութեան, դուրս մղէր բոլոր հակառակորդ ուժերը... Ի՞նչ կը լինէր, եթէ մի գեղեցիկ օր Անդրկովկասի որոշ կէտերում հայ գիւղական ազգաբնակութիւնը, թրերով ու հրացաններով, արշաւէր իր ծոցում բնակութիւն հաստատած դերմանական գաղութների դէմ, որոնք իրենց աւելի բարձր կուլտուրայով, տնտեսական աւելի նուրբ մեթոդներով՝ ճնշող մրցակիցներ են հանդիսանում և հետզհետէ ծաւալւում ու բարգաւաճում են, ի հաշիւ տեղացիների...

Հայ վաճառականութիւնը ատուած է, նշանակուած։ Բայց ո՞ր ազգի վաճառականութիւնն է սիրուած, փառաբանուած։ Հայ առևտրական տարրը, որ ջնջին բեկորն է ամբողջ հայութեան, յայտնի է իր աւանդական արատներով, դրամի ատրաստնող պաշտամունքով, դասակարգային բիրտ եգոյիզմով, որ տատնեակ տարիներից ի վեր հայ քննադատող միտքը մտրակել է ծայրայեղ խստութեամբ. բայց ո՞ր երկրում, Արևելքի և Արևմուտքի ո՞ր ազգի մէջ կը գտնէք բան, ազնիւ, էտիկայի սկզբունքներին համապատասխանող առևտրական դասակարգ։ Եւ ո՞վ չը գիտէ, որ այդ արատները չեն սպառում վաճառականութեան սկզբունքի ամբողջ էութիւնը, որ այդ վերջինը իր բացասական գծերի հետ՝ ունի ամեն տեղ, պատմութեան բոլոր շրջաններում, իր դրական, քաղաքակրթող, աշխարհաշէն դերը, որ մասնաւորապէս հայ աշխարհում, Փոքր Ասիայի, Անդրկովկասի, Պարսկաստանի հորիզոններում՝ հայ առևտրական տարրը հանդիսացել է դարերից ի վեր իբրև ճշմարիտ կուլտուր-տրէգեր, քաղաքակրթութեան ջահակիր, իբրև միջնորդ Արևելքի և Արևմուտքի միջև։ Դա մի ուժ է, վաստակած գոյութեան անհաւասար ու փոթորկալի պայքարի մէջ, մի ուժ, որ այսօր արևատեաց աշխարհում անգամ համարում է գրաւական ազգերի կենսունակութեան ու առաջադիմութեան։ Այսօր Գերմանիան, Կոմմի-Ազյաժեը Կայզէրի պետութիւնը, ձգտումն ունի կարծես վերածելու առևտրական գործակալների մի հսկայական բանակի՝ արտահանելու, ծաւալելու, աշխարհը տնտեսապէս նուաճելու, բրիտանացուն՝ „Արևմուտքի այդ Հրէայն“՝ դուրս մղելու յատուկ ձգտումով, — և ոչ ոք, ոչ մի իրաւական կամ բարոյագիտական կոդէքսով հարկ չէ համարում բարկութեան ու ցասման շանթեր թափել գերմանական այդ անպատուիր շահախնդրութեան, այդ „գիշատիչ“ ծաւալման առթիւ։

Կենսունակութեան, առաջադիմութեան գրաւական... Այնտեղ, ուր չը կայ այդ ուժը, ուր բացակայում է տընտեսական, առևտրական թռչէքը, ինիցիատիվը, — այնտեղ սովորաբար կեանքը թմրում է, ճահճանում, միտքը բարբոնում է և թունաւորում իր շրջապատը։ Այդպէս է մեր մահմեդական դրացիների աշխարհում, ուր տնտեսական — առևտրական զարգացման անընդունակութիւնը թերևս փոքրագոյնն է պակասութիւններից... Քուրդ են, զո՞ւրդ պանիսլամիստ խուլիգանները պարծենում հասարակական կարծիքի առաջ, իրենց ժողովրդի կուսական „բարոյականութեամբ“, իրենց նահապետական „առաքինութիւններով“, որոնք իսկապէս պատուհաս են միայն երկրի ընդհանուր առաջադիմութեան համար։ Դառնանք հարցին։

Անտագոնիզմը, այդպիսով, ընդհանուր է, համատարած*). ոչ զուտ տնտեսական, այլ կուլտուրական· ոչ դասակարգային, այլ ցեղական-ժողովրդական։ „Մեղաւորը“ հայ կապիտալիզմը չէ, բուրժուազիան չէ, „մեղաւորը“ Բագուն չէ, այլ ամբողջ հայ աշխարհը, ամբողջ հայ տարրի կուլտուրական առաջադիմութիւնը, բարձրութիւնը։ Սրանից մի քանի տասնեակ տարի առաջ նաւթաշրջանը գոյութիւն չունէր, իբրև ինդուստրիական վայր և առհասարակ հայ կապիտալիզմը չը կար, բայց մենք վստահանում ենք ամենավճռական կերպով պնդել, որ թուրքերի հաւաքական արշաւանքը և թուրք-հայկական ընդհարումները Անդրկովկասում հարթողէին առաջ գալ նաև որաբ

*) Այդ անտագոնիզմի հասարակագիտական պատճառների մասին յետոյ կը խօսենք։ Առ այժմ թող թոյլ տուի մեզ հետեւեալն ասել. հիշեցէք, անուուցեցէք, որ խիստ, գիտակցական, մաս այնի, փոխադարձ արելութիւն ու թշնամութիւն մինչեւ վերջին դէպքերը՝ չէ եղել երկու հարեւան ժողովուրդների միջեւ մանաւանդ հայ ժողովրդի մէջ, որ այնպէս վարժուել է խաղաղ կենակցութեան իր դրացու հետ եւ երբէք, ի հարկէ, չէր կարող մտածել, որ վերջինի մէջ այնքան մոլեգնութեամբ մի օր կարծարձուէր հակայնանարակ, ոգեխային կրակ։ Բայց միւս կողմից էլ իրականութեան հակառակ ենք զգնում եւ *à priori* սխալ՝ այն յայտարարութիւնները, որոնք, թէկուզ սուտած խաղաղասիրական զգուելի նպատակներով, հաստատել են ուզում, թէ հայ եւ թուրք մինչեւ օրս ապրել են ինչ որ իդիլլիական ներդաշնակութեան մէջ, իրարու հասկանալով, իրար զնահատելով։ Համայնակեցութեան այդպիսի մի ձեւի համար անհրաժեշտ են կուլտուրական որոշ նմանութիւններ, անհրաժեշտ են—տարբեր ցեղագրական միութիւնների մէջ—մտաւոր ու հոգեկան զարգացման որոշ աստիճան, ձգտումների որոշ համապատասխանութիւն։ Հայը իր գործերով ու տենչանքներով եղել է միշտ՝ մի մեծ Անոյայ իր մանմէդական դրացու համար։ Այդտեղ է խոր „անտագոնիզմը“։

ն ից 20-30 տարի առաջ, եթե կառավարութիւնը նպաստաւորէր։

Ով որ ժխտէ այդ՝ կամ չէ ճանաչում թուրք ժողովրդին, կամ թէ դիտակցաբար, ինտերնացիոնալիզմի ու անտինացիոնալիզմի միտումներով վարագուրել է ուզում այդ ժողովրդի նկարագիրը։ Իսկ մենք այդ համարում ենք սճրի դիմաց կրկնակի սճիր և, սոցիալիզմի ու միջազգային համերաշխութեան սկզբունքները դրատեղով հանդերձ՝ մենք անհրաժեշտ են սեպում և յանձնարարում ենք սիստեմատիկաբար մերկացնել ու խարազանել դրացի ժողովրդի այն sui generis հոգեբանութիւնը, որ քսաներորդ դարում դժոխք է ստեղծում հայութեան համար, բռնանալով նրա ոչ միայն առաջադիմութեան, այլ և գոյութեան վրայ։ Ի՞նչ կայ աւելի քաղցրելի, քան վարագուրելու այդ սիստեմը... à la Աղայեվ, որը Բագի առաջին կոտրածից յետոյ այնպէս կատաղութեամբ պահանջում էր, որ մամուլը լռէր, որ „յանուն խաղաղութեան“ նա չը մերկացնէր թուրք խուժանի հրեշութիւնները... Ի՞նչ կայ աւելի թեթեւամիտ և աւելի յանցաւոր, քան հայ ֆիլիստեր-ինտելիգենտի ու դեռաբուսիկ ոցիալ-դեմոկրատի սիրած ստաթիկը՝ աչքերը խփել դաղան-ամբոխի սիրագործութիւնների վրայ և քաւութեան նոխազի դերին արժանացնել բարբարոսութեանը ողջակէզ բերուած սեփական ժողովուրդը կամ նրա մի մասը...

Պէտք է խոստովանել, որ Ռուսաստանի և Եւրոպայի խաչաց մամուլը—չենք խօսում „Նովոյէ Վրէմիա“-ի ու նրա գոյների օրգանների մասին—այդ տեսակէտից աւելի ծառայութիւն մատուցին ճշմարտութեան և հայ ժողովրդին։ Շատ աւելի օր՝ եկիով կերպով նա ի տես դրեց բուն, թափանցիկ իրողութիւնը, մատնացոյց եղաւ իրական, խոր պատճառների վրայ և հասարակական ուշադրութեանը մատնեց իսկական ճնշողներին, պատասխանատուներին։ Նրանք, այդ թերթերը իրենց հեղինակաւոր թղթակիցների բերնով չը բաւականացան աջ ու ձախ կրկնելով շաբլոնական ֆրազը ռուս քաղաքականութեան մեղսակցութեան մասին, մի բան, որ աւա՜ղ, արեւի պէս պարզ է և պէտք չը կայ անվերջ կրկնելու. նրանք քիչ աւելի խորը գնացին արիւնոտ պրոբլէմի վերլուծման մէջ և քաղաքական պատճառներից դուրս՝ տեսան ուրիշ կարգի պատճառներ ևս՝ մտաւոր, հոգեբանական, ցեղական-կուլտուրական և այլն։ „Times“-ի, „Temps“-ի, „Frankfurter Zeitung“-ի, և „Matin“-ի պէս համաշխարհային օրգանները ծանրանում են թուրք ժողովրդի առանձնայատկութիւնների վրայ և փաստայի յօդուածների մէջ ի ցոյց են բերում այդ ժողովուրդը, երբեւ մի տեսակ անախրօնիզմ իր միջավայրում։ Աւելորդ չէ մի քանի քաղուածներ անել, թէև նրանք էապէս նոր բան չը պիտի տան հայ իրազեկ ընթերցողին։ „Times“-ը խօսում է թուրքի „գիշատիչ բնազդների“ մասին (the predatory instincts of the tartares) որոնք „ռուս կառավարութեան սճրագործ քաղաքականութեան“ հետ՝ եղել են այդ լրագրի կովկասեան թղթակցի կարծիքով, աղէտների գլխաւոր պատճառներ *)։ „Temps“-ի թղթակիցը ցոյցաւոր դէպերով պատկերացնում է կուլտուրական խոր հակադրութիւնը հայի ու թուրքի մէջ, ընտիր փաստերով բնորոշում է թուրք տարրի, նոյնիսկ ղեկավար բուրժուազիայի առասպելական տգիտութիւնը, անդամ տարրական կրթութեան բացակայութիւնը նրա մէջ։ Մինչդեռ հայերը, „Temps“-ի ասելով, „աւելի կրթուած և աւելի աշխատասէր, քան կովկասեան միւս ժողովուրդները“, ներկայացնում են խելքն ու ինտելիգենցիան, թուրք ժողովուրդը „ունի պահպանողական մի կուսակցութեան մտավիճակը, նախանձախնդիր աւանդութիւնների և յարգող ցարի վեհապետական իշխանութեան“։

„Արեւելեան տատիզմը—շարունակում է պարիզեան խաչաց ու չափաւոր օրգանը—և նոյնիսկ մահմեդական կրօնի հրահանգները ազատ են պահում նրանց, թուրքերին, արեւմտեան ազատաշունչ դաղափարների վարակումից, որոնցով տոգորում են հայերը... Լեռների մէջ էլ ապրում են այլ և այլ ժողովուրդներ, քիչ թէ շատ վայրենի, որոնք մեծիկ ազդակցութիւն ունեն Բագի թուրք ազգաբնակութեան հետ։ Նրանք ապրում են աւազակութեամբ“... *) „Matin“-ի ուշիմ թղթակիցը, Գաստոն Լեռուս, որին, ինչպէս և միւս թղթակիցներին, չէ կարելի մեղադրել հայասիրութեան ու թրքատեացութեան մէջ, որը միանդամայն անաչառ արձանագրողի դեր է ստանձնել, հետեւեալն է գրում նաւթային աշխարհից, սեպտ. 20-ին.

„Երկու ցեղերին անդունդ է բաժանում... Հակադիր յարակցութիւններ (affinités), ներհակ բնազդներ և քաղաքակրթութեան մի իդեալ, որ մինը հետապնդում է, միւսը յետ է մղում... Թուրքերը կուրօրէն յանձնառու են լինում (հայատեաց կառավարութեան առջև) պատժել մի ազատամիտ, հակապետական ժողովուրդ, որը հէնց իր իդեալով ահարկու մի ուժ է բռնապետական կառավարութեան համար“... Հետեւեալ թղթակցութեան մէջ, սեպտ. 21-ին, Լեռուն ջրում է տարածած կարծիքը՝ հայերի իրը թէ զրկող, հարստահարող դերի մասին և ընդգծում է այն իրողութիւնը, որ „թուրքն է հողատերը“ և որ դրամական հարստութիւնը ևս, նաւթային աշխարհում, անհամեմատ աւելի մեծ է թուրքերի ձեռքում։

Իսկ ի՞նչ է ասում Ռուսաստանի մամուլը, նա որ հազուադիւտ բացառութեամբ, մինչև օրս գրեթէ չի հետաքրքրւել հայի ճակատագրով և շատ էլ համակրութեամբ չի վերաբերւել դէպի մեր տանջող ու արիւնռուող ժողովուրդը...

Անհնարին է և ներկայ յօդուածի շրջանակից դուրս է՝ նոյնիսկ համառօտիւ ամփոփել այստեղ այն միտիմարական ու ուշագրաւ տեսութիւնները, որ „Ռուս“, „Նովոյէ Վրէմա“, „Պրավօ“, „Բիրժեվիա Վէդոմոստի“ և այլն—չենք էլ յիշատակում զուտ ոցիալիստական օրգանները—նեւրեցին կովկասեան անլուր աղէտներին, ծանօթացնելով հանգամանօրէն ահռելի իրականութեան փակտորների հետ, լուսաբանելով թուրք-հայկական հակամարտութեան ճշմարիտ իմաստը։

Կուզէինք միայն մի քանի յատկանշող քաղուածներ անել, որոնք, իրաւ է, դարձեալ ծանօթ ճշմարտութիւններ պիտի պարունակեն, բայց ի՞նչ արած... Պէտք է յար և միշտ կրկնել, արծարծել այդ հանրածանօթ ճշմարտութիւններն անգամ, մինչև որ նրանք խոր թափանցեն անդիտակիցների ու ֆորմալներով հմայուածների ուղղները, որոնք հակառակորդութեան և „անաչառութեան“ ցաւով բռնուած՝ ուզում են անպատճառ միևնոյն տախտակի վրայ դնել հայ և թուրք ժողովրդին, հաւասարապէս մեղաւոր ճանաչել երկուսին էլ և մինչև իսկ՝ դահիճների մեղքը փաթաթել զոհերի շլինքին։ Այդպիսի պարադայում, կարծում ենք, որոշ կարեւորութիւն ունին օտարների, ոչ-կովկասցիների վկայութիւնները։ Այս մենք նրանց առաջ ենք բերում՝ ոչ ազգայնական փառասիրութեամբ,—որից հեռու ենք—այլ անպատկառ խեղաթիւրումները ի ցոյց դնելու և ճշմարտութիւնը վերականգնելու նկատումով։

„Նովոստի“ մէջ գրում է Սաարցեվ, կովկասեան նախկին ռուս հրապարակագիրը, որ ոչ թուրքերի թշնամի է եղել, ոչ էլ առանձնապէս փայլել է հայկական համակրութիւններով, այլ աւելի շատ՝ յայտնի է իրեւ միջազգայնութեան դաղափարի փաստաբան.

„Անցեալի խորհրդաւոր ծոցից բարձրացաւ մի հրեշ, որ ապառնում է ոչնչացնել այն բոլորը, ինչ որ ստացել է բազմաթիւ սերունդների աշխատանքով, ինչ որ քաղաքակրթութիւնը արտադրել է Կովկասում։

„Ի՞նչ ասել, երբ մի ամբողջ ժողովուրդ, սկսած իր առաջնորդներից մինչև գիւղացիները, բարձրանում է մի ուրիշ, բոլորովին անմեղ ժողովրդի դէմ և անխնայ կոտորում նրան։ Հայ նաւաճողները պահե՞լ են արդեօք մահմեդականներին գերութեան, ստրկութեան մէջ։ Կամ արդեօք կեղեքե՞լ են նրանց, քամե՞լ են վերջին հիւթերը։ Ամենևին“...

Ապա պատմելով, թէ ինչպէս սկզբներում ռուս կառավարութիւնը խորութիւն չը դնելով ազգութիւնների մէջ և թոյլ չը տալով մահմեդականներին, առաջուան պէս, հա-

*) Տես 1905 թ. սեպտ. 25-ի համարը։

*) Տես սեպտ. 15-ի թղթակցութիւնը։

լածել հայերին, զգալի թեթևութիւն էր առաջացրել վերջինների կեանքում՝ Սասրցեվ շարունակում է.

„Այդ փոքրիկ թեթևութիւններն իսկ բաւական եղան գործօն և օժտուած հայերի համար, որպէս զի նրանք թօթափէին իրենց միջնադարեան ասիական կեղևը։ Այդ նրանք արին, առանց որևէ աջակցութեան ռուս իշխանութիւնների կողմից։ Հաղիւ անցաւ մէկ-երկու սերունդ—և հայերը դարձան Կովկասի ամենաքաղաքակիրթ ժողովուրդը։

„Փախչելով կղզիացումից, նրանք սիրով յաճախում էին ռուսական դպրոցները (ի՞նչ կասեն „հայ ազգային առանձնայման“ ասիթիւ կուրծք ծեծողները), սովորում էին և աշխատում։ Նրանք ստեղծեցին մտաւորականների մի ամբողջ դասակարգ և գրականութիւն։ Նրանք գրաւեցին առաջին տեղերը մտաւոր աշխատանքի բոլոր ասպարէզներում։

„Զարմանալի չէ, որ նրանք գերակշռող դեր վաստակեցին և հաւասարական կեանքում։ Թուրքերը մնացին վաղեմի թուրքերը. և ես բոլորովին հասկանում եմ այն ատելութիւնը, որ պիտի զգային նրանք, տեսնելով երէկուայ ստրուկ, ճնշուած ու հալածական հայերին՝ կեանքի մէջ առաջին տեղերն ստացած, պատիւ ու ազդեցութիւն վայելելիս“...

„Հայերը, ասում է շափաւոր ազատամիտ „Ռուս“ լրագիրը իր ռուս թղթակից Նանդի բերանով, հայերը ցոյց տուին իրանց Կովկասի մէջ ուժեղ մի ժողովուրդ, աշխատասէր ու արթուն գիտակցութեամբ... միշտ անհանգիստ, յաւէրժօրէն շարժուն ու երազուն և միշտ ձգտող դէպի անյայտ իդէալներ...

„Մահմեդական ազգաբնակութեան մասսան բնազդօրէն հասկանում է հայերի այդ դերը, ուստի ոչ միայն նրա աւանդական թշնամութիւնը չէր նուազում, այլ միշտ աւելի և աւելի աճում էր նա, քանի աւելի էին հայերը իւրացնում եւրոպական կեանքի ձևերը...

„Ինչ որ էլ լինի,—նրանք, որոնք պնդում են, թէ թուրք-հայկական ընդհարումը բացատրւում է տնտեսական պատճառներով՝ նրանք կամ քննում են խնդիրը կատարեալ ագիտութեամբ, կամ էլ աշխատում են դիտմամբ թողփչել աշխարհի աչքին.. Բազուն մահմեդական մեծ կենտրոն է ոչ միայն Անդրկովկասի, այլ և Պարսկաստանի համար։ Բազուի մահմեդականների հարստութիւնները ստեղծուել են գրեթէ բացառապէս հայերի ձեռքով. դրա պատճառը այն է, որ թուրքերը ընդհանրապէս փախչում են աշխատանքից ու ֆինանսական գործողութիւններից և գրեթէ բացառապէս դրամ են փոխ տալիս ու գրաւ են դնում հողերը... Կայ և այլ հանգամանք. թուրքի պահանջները չեն աւելանում. նա շարունակում է հագնել իր խալատը և ստանալ իր 20 կոպէկնոց ճաշը բազարից։ Իսկ թուրք մտաւորականները չեն յաճախում նոյնիսկ երկրորդական դպրոցները... Թուրքերը ունին իրենց ձեռքում ամենահարուստ հողերը. ինչ վերաբերում է Բազուի միլիոնատէրներին՝ Մանթաշեանի պէս հարուստներ թուրքերի մէջ կան տասից աւելի։ Այդպիսով, այն առասպելը, թէ անտագոնիզմը բացատրւում է տնտեսական պատճառներով, զուրկ է որևէ հիմքից...“

Մենք տրամադիր չենք միանգամայն ժխտելու տնտեսական գործօնի դերը և կարծում ենք, որ յատկապէս նեութային աշխարհում հայի ցոյց տուած մրցման ուժը, նրա բեղմնաւոր աշխատասիրութիւնը, ձեռնարկու ոգին, առևտրական անվիճելի ընդունակութիւններն ու աջողութիւնները՝ որոշ տեղ ունին թուրք «հրապարակախօս» և դրամատէր-խուլիգանների տրամադրութեան մէջ և նրանց նիւթած դաւադրութեան մղիչների շարքում, սակայն այդտեղից մինչև տնտեսական տարաձիգ բացատրութիւնը ամբողջ Կովկասեան ողբերգութեան—բաւական հեռու է։ Թուրքութիւնը միմիայն Բազուով չէ սահմանափակւում և հենց Բազում էլ, ինչպէս փաստեցինք, երկու ցեղերի հակամարտութիւնը էապէս սոցիալական-կուլտուրական է։

Տրամաբանութեան էութեանը հակառակ է՝ վերցնել որ և է անցքի երկրորդական, երրորդական պատճառներից մինը և հռչակել նրան իբրև առաջնադոյն, էական պատճառ, մի տեսակ Cause motrice, ամեն բան ծնող, ամեն բան ընդգրկող։

Եթէ նոյնիսկ—մի վայրկեան ընդունելով կովկասեան „մարքսիստների“ ստածելու եղանակը, նրանց տերմինոլոգիան, կապիտալիզացիայի ու պրոլետարիզացիայի ֆորմուլները—ենթադրենք, թէ նաւթաշրջանում ամբողջ արդիւնաբերութիւնը հայերի ձեռքն է, թէ ամբողջ բուրժուազիան հայկական է, թէ թուրքութիւնը ճնշուած տարր է, տառապող կողմ՝ ի՞նչպէս արդեօք կը բացատրենք մեզ այն սարսափելի իրողութիւնը՝ որ նաւթային մայրաքաղաքի թուրք état-major-ը կարողացաւ այդ տեղական արժէք ունեցող տնտեսական պարօլով շարժման մէջ դնել անդրկովկասեան թուրք ընդհանրութիւնը, փաթաթել նրա վզին մի հսկայական, անօրինակ ոճիր...

Ամբոխների հոգեբանութիւնը, ճիշտ է, որոշ տխուր բաներ ուսուցանում է մեզ. մենք գիտենք, օրինակ, որ երամականութեան բնազդը առհասարակ մեծ դեր է խաղում ժողովրդային այլ և այլ բռնկումների, շարժումների մէջ, բայց գիտենք նաև, որ այդ բնազդը չէ կարող ամենաբարձակ ու շղթայազերծ դուրս ժայթքել ամեն տեղ և ամեն առիթ, բոլոր ցեղագրական միջավայրերում. մենք գիտենք, որ նա չէ արտայայտւում նոյն ծաւալով ու կատաղութեամբ բոլոր մարդկային համախմբումների մէջ... Մենք վստահ ենք, օրինակ, որ նոյն երամականութիւնը երբեք չէր կարող ուրի հանել հայ ժողովրդին, հայ ամբոխին իր հարևանի դէմ, երբեք չէր գրգիռ նրան դէպի կոտորած, թալան ու աւերած, անգամ եթէ նա աւելի հնարաւորութիւն և աւելի ծանրակշիռ պատճառներ ունենար այդ պէս վարուելու։ Ի՞նչու։

Հայի տնտեսական առաջադիմութիւնները թերևս աւելի նախանձելի են վրացի տարրի, ազնուականութեան ու նրա իդէոլոգների համար։ Հայը չէ սիրուած և վրացական աշխարհում։ «Չէ սիրուած» միայն... Ցանեակ տարիներ է, ինչ Վրաստանի շովինիստները հալածում են նրան իրենց բուռն ատելութեամբ, ադիղորմ գանգատներ են հնչեցնում հայ կապիտալի նուաճումների առթիւ և ռուս կառավարութիւնը իր զգիր ծառաների,—Գոլիցինների ու Վէլիչկոների օգնութեամբ,—վաղուց ձգտում էր վրացիների մէջ ևս հողը պարարտացնել իր հայասպան դաւերի համար։ Ինչո՞ւ չ՝աջողեց։

Չէ՞ որ վրացիները շատ էլ վախ չունէին հայի դիմադրութիւնից, հակահարուածներից, և ոստիկանութեան, զօրքի բարեհաճ աջակցութիւնն ունենալով, կարող էին գէթ Վրաստանի խորշերում Մինքենդներ սարքել, աւերել, թալանել...

Այդ դժբախտութիւնը տեղի չունեցաւ և վստահ ենք, որ չի էլ ունենայ երբէք։ Երբէք, որքան էլ Վէլիչկոները թունաւոր սերմեր սերմանեն, երբէք, որքան էլ Նակաշիձէները գրգռեն, լարեն, դայթակղեցնեն վրացական շովինիզմը, նրա վնասակար ախորժակները, չը պիտի աջողեն բարձրացնել հայութեան դէմ ոչ վրայ ազնուականութիւնն ու բուրժուազեան, ոչ էլ մասսան, ոչ էլ ամբոխը։ Ի՞նչու...

Պատասխանն այն է՝ որ վրացութիւնը քաղաքակրթութեան որոշ աստիճանի հասած, համայնակեցութեան պահանջներն իւրացրած, գիտակից մի տարր է, որ գիտէ ազգային, սոցիալական կռւի իսկական իմաստը, նրա բնոյթը լուսաւոր երկրներում, գիտէ, որ այդ կռիւը մղւում է ամեն տեղ ո՛չ բարբարոսութեան ու վայրենութեան զէնքերով, գիտէ, որ ազգերը երկրագնդի վրայ հանդէս են գալիս տարբեր ձերքերով ու կարողութիւններով—ցեղական, տնտեսական մտաւոր ու հոգեկան—որոնց համեմատ իւրաքանչիւրը ձգտում է խաղաղ մրցակցութեամբ որոշ դիրք գրաւել քաղաքակրթութեան երկարաձիգ սանդուղքի վրայ,—վրացի ժողովուրդը ունի այդ յատակ գիտակցութիւնը, ուստի և երբէք, ոչ մի տմարդի կառավարութիւն, ոչ մի գիշատիչ, վայրագ շովինիզմ չէ կարող շարժել նրան յանուն մի անպատիւ եղբայրասպան կռւի, անգամ եթէ նա, այդ ժողովուրդը, ի դէմս իր կրթեալ, առաջաւոր տարրերի, մի ցաւագին թիւրիմացութեամբ հաստատ մնայ իր աւանդական կարծիքի մէջ հայ ժողովրդի նկատմամբ, անգամ եթէ նա այդ վերջինի մի չնչին բեկորի, մի անչան փոքրամասնութեան առանձնայատկութիւններով շարունակէ դատել ամբողջ աշխատասէր, առաջադէմ հայութիւնը...

Այն, ինչ որ անհնարին է մեկ ժողովրդի համար, հնարաւոր է դառնում միւսի համար։ Այն աշխարհաւեր երամական բնազդը, որ յատուկ է վայրենի հօրդաներին, և որ բարեբախտաբար, հեռու է հայ ու վրացի ժողովուրդների հոգեբանութիւնից,—իր ահեղ մոլեգնութեամբ ժայթքում է թուրք բովանդակ ազգաբնակութեան մէջ, որը պատրաստ, ընդունակ է յայտնուում—իրողութիւնները պարզ ապացուցին այդ—առանց վարանելու ձայնակցել իր շէֆերի ազդանշանին և տարերային թափով գահավիժել խաղաղ, անմեղ ազգաբնակութեան վրայ։

„Եա՜ Ալի, վա՜յ գիավուրին“—հնչում է դու մարտահրաւերը, և վայրկենաբար, ասես գետնի տակից, դուրս են կոչւում ապառաղինուած բանակներ, գալիս են հեռուից, սահմանի միւս կողմից, գալիս են և մօտիկից, հայ ժողովրդի հէնց քթի տակից, նրա երեկոյ հաշտ ու մտերիմ բարեկամներն անգամ, նրա աղ ու հացը վայելողները, նրա ընտանեկան օճախի աշնանները մի զարհուրելի, հրդեհային վրէժխնդրութեամբ, տուները կրճատելով, ծառանում են նրա դէմ։ „Ցո՛ւր ոտացածդ, կամ տո՛ւր կեանքդ“... Մենք պարզապէս նախապատմութեան մէջ ենք, ընթերցող. որքան էլ աշխատենք վարագուրել դաժան, անողորմ իրականութիւնը, որքան էլ ուզենանք ինտերնացիոնալիզմի ու համերաշխութեան մտահղացութեամբ մեղմել դժոխային, սիրա կարատող իրողութիւնները, մենք կատարեալ նախապատմութեան մէջ ենք, այն մռայլ շրջանում՝ երբ մարդկային ցեղերը, անասնական տեսակների պէս, գիշատիչ ախորժակներով բռնուած, զրոհ էին տալիս իրենց նմանների դէմ, երբ բռնի ուժը, „վա՜յ յաղթուածին“ աղաղակելով, խրոխտ ու յաղթական սուսուռնում էր իր արիւնոտ նախճիրների վրայ...

Անշուշտ, և այդ պարագայում լուում են „անտեսական“ պատճառաբանութիւնները, իդեալի կերպով օգն են ցնդում կապիտալիզացիայի ու „պրոլետարիզացիայի“ նկատումները, և տակը մնում է մի սոկալի, մի դժնդակ փաստ, այն, որ Times-ը որակում է predatory instincts բառերով, որ Պարցեվ անուանում է „անցեալի Ցոյից բարձրացող մի հրէշ,—մի իրողութիւն, որ իր ահարկու պարզութեան մէջ վաղ՞ւց ծանօթ է ամեն մի հայի...

Ո՞վ մեզնից չէր գիտէ, որ նոյնիսկ սովորական, նորմալ ժամանակ, աւազակութեան համաճարակը—որ հաւասարապէս մաստելի է թուրք բէկերին ու կիսապրոլետար գեղջուկներին—իսկոյն բռնում է սար ու ձորեր, հէնց որ անդրկովկասեան այս կամ այն գաւառի գլուխ է կանգնում մի թոյլ գաւառապետ, մեղմ միջոցների սիրահար։ Եւ ո՞վ չէր գիտէ, որ համաճարակը կորում է անմիջապէս, հէնց որ նաչալնիկը փոխուում է, հէնց որ գալիս է խիստ, առնողորմ միջոցների ներկայացուցիչը...

Այս. պարզ, անգրագէտ հայ գիւղացին՝ տաճկահպար, թէ կովկասահայը՝ կը վկայէ ձեզ, առանց խորիմաստ փօրսուլների դիմելու, լոկ իր պապերի ու իր ամենօրեայ փորձի վրայ յենուած, որ իր անօրինակ դրժբախտութիւնների պատճառը մուսուլման ազգաբնակութեան տնտեսական իրաւազուրկ դրութիւնը չէ, որից ինքն էլ տառապում է, ուելի մեծ չափով, այլ որ իր դրացին, մուսուլման ժողովուրդը տնհանդիսաորը է, անհանգիստ է անկախ ապահովութեան ու անապահովութեան նկատումներից, անկախ ժամանակից ու տարածութիւնից, և՛ Անդրկովկասում, ուր նա ենթակայ է քրիստոնեայ լծի, և Ցանկասասնում, ուր նա յայտնուում է տիրապետող տարրը—և որ նա անհանդիստ է միշտ բացառական վուլգար իմաստով, տակուն աշխատանքից ընդհանրապէս խորշող, թալանի ու սպանութեան միշտ տրամադիր. բայց հայի ռամկական դատողութիւնը կ՚ասէ ձեզ և այն, որ մահմեդական տարրի այդ խուժադուժ անհանգստութիւնը խիստ դիւրութեամբ սանձահարուում է նոյնիսկ Թիւրքիայի ու Պարսկաստանի պէս կէս-անիշխանական երկրների մէջ, երբ կառավարութիւնները կամենում են այն, որ այդ անհանգստութիւնը, թալանի ու աւերի այդ խորտրմատ բնազդները մինչև օրս հրաշալի կերպով գոյութիւն են նաև Անդրկովկասում, որ յանցանքի ու ոճրի հերոսներին կանգնեցրել է յաճախ Սիբիրի ու կախաղանի հեռանկարը, որ այդ հեռանկարի սարսափները վայրկենաբար չքացան, որ անպատժութեան դիտակցութիւնը յանկարծակի բռնեց նրա տեղը...

Ցանկարծակի՞... Այդտեղ արդէն միջամտեցէք դո՛ւք, ինտերիգենտ ընթերցող, այդտեղ ոամիկ հայ գիւղացու խելքը չի հասնում. առանց արամաբանութեան օրէնքների հետ ծանօթ լինելու, նա ուրեմն ձեզ մերկ, անպատճառ և պերճախօս ցուցմունքները, որոնք ոչ այլ ինչ են, բայց եթէ հոկայական տրաղեդիայի բուն, ծնող—նիւթող պատճառները, իսկական Causes déterminantes-ը...

Իսկ „յանկարծակին“—ձեզ յայտնի է, որ պատահական ոչինչ չը կայ ոչ բնութեան և ոչ մարդկային հասարակութեան մէջ—„յանկարծակին“ ոչ այլ ինչ է, եմէ ոչ երկար տարիներից իվեր պատրաստուող, զարգացող իրողութիւնների ճակատագրական հետևանք, կամ ասենք ուելի պարզ—այն չարաշուք, ոճրագործ քաղաքականութիւնը, որ ասիական բռնաւորների աչքում միակ ու դերադոյն միջոցն է՝ թումբ դնելու Յեղափոխութեան բարձրացող ալիքի առաջ...

Նման պատճառներ, նման հետևանքներ։ Մենք ոչ մի էական տարբերութիւն չենք տեսնում տաճկահայոց և ռուսահայոց կատարածների մէջ, նրանց աղբիւր-պատճառների ու արտայայտութիւնների տեսակէտից (բացի ի հարկէ, նրանից՝ որ Կովկասում գաղանացած խուժանի հարուածներին, հայկական դիմադրութիւնը պատասխանում է ոչ նուազ կատաղի հարուածներով։) Նոյն կուլտուրական-ազատագրական հոսանքը հայ տարրի մէջ, նոյն ոճրագործ, խուլիգանական քաղաքականութիւնը, նոյն քսումելի, անարգ գործիքը՝ իդէմ վայրագ, արիւնածարաւ, նախապատմական մարդակերների... Սակայն, հաւատացած եղէք, ընթերցող, որ եթէ կովկասեան օսցեալ-դէժօկրատները շնորհ անէին մակերեսային մարզանքներից դուրս՝ փոքր ինչ խորը գնալ տաճկահայկական աշխարհաշուռաչ ողբերգութեան անալիզի մէջ, մի ողբերգութեան, որի առաջին գործողութիւնը խաղացել է դեռ տասն տարի սրանից առաջ—այդտեղ ևս նրանք պիտի հոլովէին, մաքի մի ողբալի խակութեամբ ու ստրկութեամբ, նոյն ընդհանուր, ծանօթ բառերը՝ ֆէոդալիզմի քայքայում, դասակարգային կռիւ, հայկական նացիոնալիզմ, հայ առևտրական մրցութիւն, դիֆֆերենցիացիա, կապիտալիզացիա, պրոլետարիզացիա... Ո՞ւր ես Մարքս... Երբէք մի մեծ, պատկառելի թէորիա չէ ենթարկուել այդքան տխուր պրոֆանացիայի։

(Շարունակելի)

ՀԱՅ—ԹՐՔԱԿԱՆ ԿՌԻՒԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիս, յունվար 9 | 22.

Ինչի՞ սկսենք։ Մեջոց չը կայ Թիֆլիսի հայ-թուրքական կռիւները, որոնք սուեցին մի ամբողջ շաբաթ՝ հոկտեմբերի 22—28, երկար նամակի նիւթ շինել։ Այդ յետոյ Ասենք միայն, չը նայելով Բորչալուի թուրքերի ահագին քանակութեամբ քաղաք թափուելուն, շնորհիւ Դաշնակցական բնտիր կազմի, հայերը պատուոյ դուրս եկան։ Մի շաբաթ շարունակ թուրքերի կատարեալ հալածանք էր քաղաքում, մինչև որ իրանք ստիպուած եղան եկեղեցիներին ճանապարհ դնել և հաշտութիւն խնդրել։ Հետաքրքիրն այն է, որ կովկասեան մայրաքաղաքում՝ անգամ կառավարութիւնը հայ-թուրքական կռիւների վերաբերմամբ նոյն տակ-

սիկան ունեցաւ ինչ որ ամեն տեղ „laisser faire“, և մի ամբողջ շաբաթ Թուրքական մասը պաշարած էր մեր խրամբերով, դիշեր ցերեկ գնդակոծութիւն չորս կողմից, առանց որ կառավարութիւնը մի մարդի չափ ուշադրութիւն դարձնէ։ Սա կատարեալ „սկանդալ“ էր։ Թուրքերը մեծամեծ նիւթական վնասներ կրեցին և շատ էլ կոտորուեցին. մինչև այժմ՝ ուշքի չեն եկել։ Շատերն իպատ հեռացան քաղաքից՝ շտապ շտապ ծախելով իրենց ունեցած չունեցածը։ Բազմաթիւ վերին աստիճանի հետաքրքիր մանրամասնութիւններ կան՝ բնորոշելու այս քաղաքի զանազան յեղափոխական կուսակցութիւնների դիրքը (մասնաւորապէս սոց. դեմոկ.) դէպի հայերը, բայց դա մեզ շատ հեռու կը տանէր։ Ասենք միայն, որ վրայ ազնուականներից շատերը բացարձակ թշնամական դիրք բռնէ՝ ին դէպի հայերը և բարեկամական ցոյցեր արին Թուրքերին։ Նոյնիսկ մի պատգամաւորութիւն գնաց Բօրչալուի Թուրքերի մօտ վրայ ազնուականներից, որոնց այդ միտիան չափազանց նենգաւոր լինելու բոլոր նշաններն ունի։

Գանձակի ընդհարումը Թիֆլիսից մի քանի օր առաջ եղաւ։ Ինչպէս ամեն տեղ՝ Գանձակում էլ խուրքերը յանկարծ յարձակուել են հայոց շուկայի վրայ, կոտորել ու թալանել։ Ուշքի գալով՝ հայերը զօրեղ դիմադրութիւն են ցոյց տուել և յետ մղել դէպի հայոց թաղը դիմող Թուրքերի խուժանը, բայց նիւթական կորուստն ահագին է եղել շուկայի թալանելով։ Այն ժամանակից մինչև այժմ (երկու ամիս) հայ և Թուրք՝ երկու զինած բանակներ են կանգնում. հայերը պահանջկոտ ու խիստ, չը նայելով իրենց առաջին կորուստներին, Թուրքերը ընկճած ու հաշտութեան իբր կողմնակից։ Մի քանի մանր ընդհարումներ եղան, ուր հայերը շարունակ յաղթել են, և եթէ զօրքը չը խանգարի, երևի մի նոր և ահռելի ընդհարումով իրար կը ջնջեն, այն աստիճան լարուած են։ Հայերը պատրաստ են և ընդհարումից չեն փախչում։

Թիֆլիսից և Գանձակից կռիւներն անցան իրանց գաւառները. Թուրքերը քարուքանդ արին Գանձակի մօտ երկու հայ գիւղեր՝ Բաղաճար և Գեաբեկ, (300 տ. և 75 տ.) Հայերը պատասխանեցին քանդելով երեք Թուրք գիւղեր՝ Կերվենդ, Բալչալու և Թօփալ-Հասանլու, երկու կողմից էլ կատաղութիւնը զարհուրելի է. Համազասպ իր դերումն է. Կռիւը շարունակւում է և այլ մասերում. երկրի աւերումը զարհուրելի չափեր է ընդունում։

Այժմ արիւնալից ընդհարումներ են Ղազախ-Բօրչալուի, Շամշադինի կողմերը, ուր հայկական երեք գիւղեր շրջապատուած են վտանգաւոր ձևով։ Երեկ լուր եկաւ, որ Սաքօն խրտակել է Թուրքերի այժը՝ մեծ ջարդ տալով և ցրելով նրանց խուժանը։ Այսօր փոխարքային մի այսպիսի ծիծաղելի հեռագիր է եկել Թուրքերից. „Դաշնակցութիւնները մեր եօթը գիւղը քար ու քանդ արին. եթէ օգնութիւն չ'ուղարկէք, մենք բոլորս ստիպուած կը լինինք դառնալ դաշնակցութիւններ“։ Այս տգէտները կարծում են, թէ Դաշնակցութիւնը Իսլամի պէս մի կրօն է։

Շուշիից եկող լուրերը նոյնպէս մխիթարական են. Թուրքերը բռնել են Աղդամի ճանապարհը. իսկ հայերը բռնել են 300 հոգով Ակերանը և Շուշիի շրջակայքի Թուրքերի պաշարը կտրել, ինչպէս և քաղաքի Թուրքերինը։ Վերջիններիս կացութիւնը ոսկալի է։ Հայերը Ակերանով պաշար ստանում են գիւղերից, իսկ Թուրքերը սովամահ լինելու վիճակի մէջ են։ Այժմ անվերջ օգնութիւն են խնդրում կառավարութիւնից։ Այնտեղ մի քանի Թուրք գիւղեր ոչնչացուած են։ Այսօր այստեղից գնում է Շուշի-Եալամ գիծը մաքրելու մի գեներալ զօրքով և թնդանօթով։ Տեսնենք, որա բռնելիք դիրքից շատ բան է կախուած։ Այսօր հեռագիր ստացանք Շուշուց, որ երկու օր առաջ քիւրդերի և Թուրքերի մի ահագին բանակ շարժուել է Շուշիի և շրջակայքի վրայ, բայց ահագին կորուստներով յետ փախել։ Հայերի յաղթանակը կատարեալ է։ Սկսած է ամեն ընդհանրի շրջանը։ Ցաւալի է, բայց փաստ է, որ խուրքերը մեր խաղաղ, կուլտուրական ժողովուրդը դարձնում են յարձակող-պատերազմող։

Երևանեան նահանգը արտաքին խաղաղութիւն է վայելում։ Արդարութիւնն իր հատուցումն ստացաւ. հին Նախիջևանի խուրքական շուկան վառեցին կօզակները, իսկ արիւնարբու Զահրին իպատ քարուքանդ արին ու վառեցին։ Դրանց կոտորածը ահռելի է։ Սքանչելի հատուցումն. կօզակների կատաղութեան պատճառն այն է, որ խուրքերը երես առած ապանում են նրանցից մի քանիսին։ Երևանեան նահանգի մնացած մասերում նոր ընդհարումներ չը կան։ Դումանի ռազմական տաղանդը փառաւոր արդիւնք տուեց. հրաշալի է կազմակերպել խուսիկ ու մնայուն խրամբերը։

Ընդհարումների մանրամասնութիւնները յետոյ։ Փաստն այն է, որ հայերն այժմ (միայն այժմ և շատ ուշ) իրանց հերթին հարուածներ են հասցնում և կամաց-կամաց վնասները հաւասարւում են։ Հասել է մի այնպիսի շրջան, որ էլ հայերը չեն, որ հեռագրով զօրք են խնդրում (քիչ բացառութեամբ), այլ խուրքերը։ Եթէ պայմանները չը փոխուեն (արտաքին), դարձեալ խուրքերի վիճակը էլ աւելի վատթար կը լինի, երբ նրանք պիտի փարձեն լեռները բարձրանալ։

„Իսկ կառավարութիւնը“, կը հարցնէք նրա դիրքը դեռ չի փոխուել. բարեկամ դէպի խուրքերը միշտ, բայց ոչ այնքան, որ հայերին բացարձակ կոտորել տայ նաև զօրքով. նա խառնւում է ճիշտ այնքան, որքան հարկաւոր է ցոյց տալ իր գոյութիւնը մի կողմից, և կռիւները շարունակել տալ միւս կողմից։. Զինադադար չեն անում՝ ո՛չ հայերին և ո՛չ խուրքերը. ն. օգնում են մերթ նրանց, մերթ միւսներին, միայն պաշտօնական հաղորդագրութիւնների մէջ աշխատում են մեղքը միշտ հայերի վրայ ձգել։ Եւ մեր ապուշ հարեւանները մինչև այժմ չը հասկացան, թէ ինչեր ենք կրցրնում այս արիւնահեղ կռիւներով։ Երկու կողմն էլ անընդհատ պատրաստութեան մէջ են։ Գարնանը կատարեալ պատերազմ է սպասւում։

Ահա մեր ընդհանուր դրութիւնը։ Մխիթարական ոչինչ, եթէ նոյն իսկ մինչև վերջը մենք թուրքերին յաղթել կարողանանք։ Կուլտուրական ամեն մի ձեռնարկ մեռաւ, դէպրոց, զրականութիւն նոյնպէս։ Եկը չերկայ, մինչև որ կառավարութիւնը վերջ չը տայ այս դրութեան։ Այդ կը լինի այն ժամանակ, երբ Ռուսաստանում կը հաստատուին զօրեղ կարգեր։ Եթէ...

Դառնանք Թիֆլիսին։ Փաստաւորապէս այստեղ շատ հետաքրքիր դէպքեր տեղի ունեցան, Դեկտեմբեր 7-ից, երբ ընդհանուր գործադուլ հրատարակուեց։ Այստեղ հաստատած է զինուորական գրութիւն։ Առաջին օրերը խրատութիւնները դերազանցեցին բոլորը, ինչ մենք տեսել էինք Պլէվնի Գալիցինեան բեժիմի տակ։ Թնդանօթներով քար ու քանդ արին բանւորական թաղը-Նախալօվկան։ Երևանեան հրապարակից քիչ հեռու „Սալդաթսկի“ բազարում մի ռումբ ձգուած լինելու համար՝ թնդանօթի բռնեցին և հրդեհեցին Ներսիսեան դպրոցին պատկանող մեծ շէնքը, որ կրակի ճարակ դարձաւ իր միջի խանութներով, ճաշարաններով և նրանց տերերով։ Շարան շարան հրապարակում փռած էին այրուած, ածուխ դարձած դիակներ. հրապարակում գրնդակի բռնեցին փախչողներին։ Այրուած և սպանուածների թիւը 100-ից անց է և բոլորը խեղճ ու կրակ մարդիկ։ Ռումբը, ձգուած մի անյայտ ձեռքով, սպանեց մի կօզակ և մի ձի։ Հետևանքը այս սարսափելի կոտորածն ու հրդեհը։ Նոյն գիշերը կօզակները խլանեցին „Սօլդաթսկի“ բազարի շուրջը դանուող բոլոր խանութները (բոլորը հայ), մինչև „Մշակի“ խմբագրատան փողոցը։

Զինուորական գրութիւնը դեռ շարունակւում է։ Իրումն խայտառակութեան, այս օրերս Պալամայի տեղ Թիֆլիսի և գաւառի գեներալ-նահանգապետ է նշանակուած, ի՞նչ էր կարծում՝ մվ,—Նախիջևանի տիրահռչակ Ալիխանով-Ավարսկին։ Ինքն ըստ ինքեան Թիֆլիսում նա մեծ „զալսթներ“ առնել չի կարող, բայց ապաւորութիւնը գաւառներում փատ է, և որպէս արտայայտութիւն՝ Թուրքերը քաջալերուած, նո-

րից շարժեցին, բայց ինչպէս ասացինք, սասիկ ջարդ-ուեցին։ Խիստ խուզարկութիւններ կատարուեցին. յատկապէս Թիֆլիսում. բանտարկուած են բազմաթիւ յեղափոխականներ զանազան կուսակցութիւններից։

Վրաստանում (Գուրիա) ապստամբութիւն է։ Շատ լուրջ ընդհարումների լուրեր են գալիս Վրաստանի զանազան կողմերից, որ տարաբախտաբար ճշտել առ այժմ անհնարին է։

Բոլոր ծայրահեղ թերթերը այստեղ փակուած են կառավարութեան ձեռքով, մնացածները հազիւ հազ թոթովում են։ Մամուլի ազատութիւնը կատարեալ ձևական է. ճիշտ է ցենզուրը չը կայ, բայց ոչ ոք չի համարձակում ծպտուն հանել, որովհետև թերթը փակւում է։ Ռուսական „սահմանադրութիւնը“ Երօնոս դարձաւ, որ ագահաբար լափում է իր բոլոր լաւագոյն զաւակներին։

Թէ ե՞րբ կը վերջանայ Թիֆլիսում զինուորական դրութիւնը, չը գիտենք. Առ այժմ կեանքն այստեղ դժոխք է և ամեն բոպէ կարելի է սպասել նորանոր սարսափներ։ Խուլիգանների թիւը ահագին է։ „Հայրենասիրական Ընկերութեան“ անդամների տոմսերը անձամբ տեսանք և նրանց նոմերը վեց հազարից անց էր։ Այդ տոմսերը ծախում են սրիկաներին, այդպէս են կազմում „հայրենասէրների“ բանակը ի պաշտպանութիւն դահի։

ՃԳՆԱԺԱՄԸ

Թիֆլիս, յունուար 6 | 19.

Երկար ու ձիգ նկարագրութիւններ չը սպասէք մեզնից։ Կոշմարի տակ ենք ամենքս էլ, գրելու՝ ոչ միջոց, ոչ տրամադրութիւն, այժմ որ „էն գերագոյն ճգնաժամն է“, մեր թիւրքահայ եղբայրների արտայայտութեամբ, այժմ որ, յիրաւի, „կեանքի ու մահուան“ խնդիր է դրուած խեղճ, բազմաչարչար ժողովրդի առաջ։ Ե՞րբ և ի՞նչպէս կը վերջանայ այս զարհուրելի փորձութիւնը։ Ե՞րբ և ի՞նչ պայմաններում պիտի հանգիստ թողնէ մեզ այս գարշելի, վայրենաբարոյ խուժանը... Ջարդ, հրդեհ ու աւերած—ահա ամենօրեայ փաստը։ Հրացանների անվերջ որոտումներից, զէնքի անընդհատ շաչիւնից կարելի է խելագարուել... Թուրքը ջարդւում է հայից անհամեմատ աւելի. բայց յետ կացողը չէ։ Անարգ „վէնդետտան“ աւելի և աւելի է բորբոքւում։

Մտքերս խառնւում են, չը գիտեմ որտեղից սկսել։ Լսեցիք ի հարկէ, որ Գանձակն ու Թիֆլիսը ևս ազատ չը մնացին Թուրքերի յորձանքից։ Իսկ այսօր հրդեհը նորից տարածւելու վրայ է և կառավարութիւնը աւելի ափաշկարայ, աւելի ցինիզմով խրախուսում է հայի թշնամուն։

Հարկաւոր է գրեթէ մի հրաշք այս դժոխային կացութեանը դիմագրաւելու համար։ Թուրքերը զինւում են, ազատ, անվախ, իսկ մեզ շարունակում են զինաթափ անել, հալածել, բանտարկել։ Գեներալ Տ ա կ այ շ վ ի լ ի ն, որի վրայ միամիտները յոյսեր էին դրել, թէ պիտի խաղաղացնէր Գանձակի ընդարձակ նահանգը—դուրս եկաւ մի հրէշ, բառիս կատարեալ նշանակութեամբ։ Նա կարողացաւ իր քեռու, Դակաշիձէի վրէժը առնել։ Գանձակը մատնեց կրակի և կոտորածի և Ներոնի պէս հրճուեց իր գործով... Մանրամասնութիւնները սիրտ չը կայ գրելու—կը կարդաք Թիֆլիզի լէգալ թերթերում։

Կը կարդաք այնտեղ և „Դ ա շ ն ա կ ց ու թ ե ա ն“ մասին, որ հայ ժողովրդի պահպան հրէշտակն է այս սև օրերում։ Այդպէս է մտածում այսօր ամեն մի հայ և „Դաշնակցութիւն“ բառը ամենքի շրթունքների վրայ է։ Գանձակի ամբողջ հայ քաղաքամասը նա ազատեց ջարդից ու կրակից։ Գաւառներում ևս դիմադրութեան հոգին է նա, և պաշտպանողական գործողութիւններից անցնում է յարձակողականի, ինքն էլ—ճարահատեա՛լ—յաճախ աւերում է ու կրակի մատնում թաթարական գիւղեր։ Ամբողջ հատոր է պէտք „Դաշնակցութեան“ վերջին ժամանակում մղած կռիւները նկարագրելու համար։

Հարկ կա՞յ ասել, „որ մեր կազմակերպութիւնն ևս դեռ երէկ բաժանում էր հայի ճակատագիրը. միշտ ամբաստանուած, միշտ հալածուած և այն՝ ոչ միայն բռնապետութեան ու թուրքերի կողմից, ոչ միայն հայ հասարակութեան խոհեմ, „քաղաքագէտ“ տարրերի կողմից, որոնք Դաշնակցութեան գոյութիւնը համարում էին պատուհասներից մինը և պատրաստ էին հաշտութեան ձեռք մեկնել խուլիգան կառավարութեանը,—այլ և... սոցիալ-դէմոկրատների կողմից, ռուս վրացի եւայլն։ Նրանք օրօրւում էին անուշ երազներով և կոնկրետ, շանթող փաստեր էին հարկաւոր՝ նրանց սթափեցնելու համար։ „Հայ նացիոնալիստները, Դրօշակեանները էին մեղաւոր և էնց որ սոցիալ-դէմոկրատները միջամտեն՝ կռիւը կը դադարի,“—այսպէս էին քարոզում նրանք և տասն ամեայ աղէտներից յետոյ, երբ թաթարական արշաւանքը սպառնաց նաև Կովկասի մայրաքաղաքին, նրանք վճռեցին, վերջապէս խօսքից անցնել գործի... Լաւ է, իհարկէ ուշ, քան երբէք, և կատարեց անխուսափելին։ Սոցիալ-դէմոկրատիայի իբրև հաշտարար միջնորդի, զինուած հրապարակ գալը՝ Դաշնակցութիւնը, բնականաբար, ողջունեց, իսկ Թուրքերը չը գնահատեցին և յարձակւելով սոց.-դէմոկրատների վրայ՝ սպանեցին նրանցից մէկ հոգի և վիրաւորեցին մի քանիսին... Փառք և պատիւ գաղափարի անձնուրաց զինուորներին, որոնք նոյնքան արժանի են մարդկային խոր երախտագիտութեան, որքան այն անվեհեր հայ ուսանողները, որոնք Օդեսսայի վերջին արիւնահեղ „պոգրոմներում“ կռուեցին և ընկան՝ հալածական հրէաների մարդկային իրաւունքները պաշտպանելիս։

Այդ ցաւալի դասից յետոյ սոցիալ-դէմոկրատներին ուրիշ բան չէր մնում, բայց եթէ հեռանալ Թուրքական բանակից, թողնել միջնորդի դերը, թողնել առ ժամապէս միջազգային, պրոլետարական համերաշխութեան ապարդիւն քարոզը Թուրքերի մօտ. նրանց մնում էր արդար ու օրինաւոր ճանաչել Դաշնակցութեան տաքտիկը, որ միշտ եղել է և է շարունակ՝ ինքնապաշտպանութիւն։

ԴԵՊՔԵՐԸ ՋԻԲՐԱՅԻԼԻ ԳԱՒԱՌՈՒՄ

Հաւտուք, հոկտեմբեր 10.

Հաշտութիւնից մի քանի տր յետոյ Թուրքերը սեպտեմբերի 14-ին գիշերը անհամար քանակութեամբ հաւաքւում են Դօլանլարի շուրջը և պաշարում գիւղը գրեթէ չորս կողմից։ Միւս օր վաղ առաւօտեան՝ դեռ արշալոյսը չը բացուած, նրանք մօտենում են գիւղին և ուզում են ներս խուժել։

Մէկը քնած, միւսը դեռ տեղերի մէջ պառկած, հայերը մնում են շարած թուրքերի անակնկալ յարձակումից, բայց շնորհիւ իրանց յաստուկ բաջութեան, շատ էլ չեն վնասուում. իսկոյն զէնքի են դիմում և պաշտպանուում են քաջարի կերպով։

Կռիւը կատաղի է լինում և աւերիչ։

Թուրքերի թիւը աւելանում է բոպէ առ բոպէ նոր եկած ուժերով, իսկ հայերը որտեղից պիտի ապասէն նոր ոյժերի։ Յոյսերը դրած իրենց բարեկամների վրայ, նշանաբանը „Մահ կամ ազատութիւն“ շարունակում են պաշտպանուիլ։ Նրանք քշում են թուրքերին իրենց՝ հայերի նախօրօք պատրաստած դիրքերից դէպի ներքև, դրաւում այդ դիրքերը և սկսում կրակ իմափել փախչող թուրք խուժանի յետևից. . .

Տեսարանը սոսկալի էր, սրտաճմլիկ։

Վաղ առաւ ութից մինչև խոր դիշեր շարունակուում է կռիւը, և նա ճակատը դէմ դրած թշնամու սրին, կարծէր գնդակին՝ հերոսաբար պաշտպանուում է մինչև վերջ։

Կռիւը վերջանում է նրանով, որ թուրքերը կռուի դաշտում թողնելով 15 սպանուած և մի քանի էլ ծանր ու թեթև վիրաւորներ՝ յետ են նահանջում։ Սպանուածների մէջ մնում են նաև մի քանի յայտնի բէկեր, որոնցից մեր ճանաչածը՝ շխալուղցի յայտնի Ալին և իր երկու միւս եղբայրները։

Հայերից սպանուում է ջրաղացում մի մարդ, ծանր կերպով վիրաւորուում են գիւղի մէջ երեք մարդ և մի կին։ Այդ կինը դիրքերը փամփուշտ տանելու ժամանակ է վիրաւորուում։ Յարգանք նրան։

Յաջորդ օրը կռուի տեղը դալիս են դաւառապետ Ֆիմբալով մի խումբ կօզակներով և ակարհոչակ Հիւսէյին աղան իր աշխարհահռչակ աւազակախմբով։ (Սա հիւղում դերի բռնուածն է)։

Հայերը, ինչպէս և պէտք էր սպասել, չեն թողնում աւազակախմբին մտնելու գիւղին և պահանջում են, որ հեռուում սպասեն։ Իրաչ պաշտնական արձանագրութիւններ կազմելուց յետոյ դաւառապետը կօզակների մի ստանեակ է թողնում Դալանքարում և յետ դառնում։ Իսկ Հիւսէյն աղան, իրեն յաստուկ կեղծաւորութեամբ առանց կարմրելու և խղճի խայթոց զգալու նորից սկսում է շոյել հայերին, որ հաշտ մնան. . .

Բայց հայերը լաւ են ճանաչում Հիւսէյին աղաներին, այն աղաներին, որոնք առաւօտից մինչև երեկոյ, թուրք գիւղացուն պատկեցրած իրենց տան մէջ, ծեծել են տալիս ճիպոտներով, որ հրացան առնեն և ինչո՞ւ համար. . .

Այդ կռուից յետոյ սկսում են հայերի մտանակի տպաւորութիւնները, որոնք մի նոր պատուհաս են բերում մեր գլխին։

Դալանքարի փառաւոր դիմադրութիւնից յետոյ դարձեալ „հաշտութիւն“ է կնքուում, բայց ինչպէ՞ս հաշտութիւն. . . Մասայեն կոտորածը փոխուում է անհաստատ սէոորի և թուրքերը թաքնուած այս կամ այն խփի տակ, այս կամ այն ճանապարհի վրայ, մէկիկ մէկիկ կոտրում են հայերին, անդամահատում, յօշոտում նրանց մարմինները, այլանդակում անշնչացած դիակները. . .

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱԿԵԴՕՆԱԿԱԿ ՄԻՈՒԹԻՒՆ

Մեզ հաղորդում են հաստատ աղբիւրից, որ մակեդոնական դատի համար աշխատող կարևոր ֆրակցիաները նորերս միացել են ի մի ընդհանուր մակեդոնական կազմակերպութիւն, որի նշանաբանն է „Մակեդոնիան մակեդոնացիներին“ և որը յեղափոխական ճանապարհով պիտի ձգտէ իր նպատակին—Մակեդոնիայի անկախութեան։ Այդ միութիւնից դուրս է մնացել գեներալ Յոնչէվի կուսակցութիւնը։ Միացած մարմինը ուղղել է նրան մի տեսակ ուլտիմատում, որի մէջ ամենախիստ սպառնալիքներով պահանջում է չը խանգարել իր գործունէութեան։

Նորակազմ մարմնի կանոնադրութեան մէջ կարդում ենք ի միջի այլոց

„Մակեդոնո-Ադրիանոպոլեան ներքին Յեղափոխական Կազմակերպութիւնը նպատակ ունի միացնել Մակեդոնիայի և Ադրիանոպոլեան վիլայէթի բոլոր դժգոհ տարրերը, առանց ազգութեան խտրութեան՝ նուաճելու համար կատարեալ ինքնավարութիւն այդ երկու երկրների համար։

„Կազմակերպութիւնը ընդդիմանում է այդ երկրների նուաճման ու բաժանման՝ որ պետութեան ձեռքով էլ կատարւի նա։

„Այդ նպատակին հասնելու համար, Կազմակերպութիւնը աշխատում է շովինիստական պրոպագանդի և ազգայնական դժուարութիւնների դէմ, որոնք պատակում ու թուլացնում են ազգաբնակութիւնը իր կռուի մէջ ընդհանուր թշնամու դէմ։ Նա ձգտում է արթնացնել ազգաբնակութեան յեղափոխական ոգին ու գիտակցութիւնը, նա իր բոլոր միջոցները ի գործ է դնում՝ ուզած ժամանակին զինելու երկիրը, ընդհանուր յեղափոխութեան նպատակով։ Նա աշխատում է բարձրացնել ազգաբնակութիւնը տնտեսապէս ու մտաւորապէս և նպաստում է նրա լեգալ, օրինական կուին՝ թիւրք կառավարութեան դէմ։

„Մակեդոնո-Ադրեն. Ներքին Յեղափ. Կազմակերպութիւնը բաղկանում է տեղական յեղ. կազմակերպութիւններից, որոնք կազմուած են ամեն մի վայրի անդամներից։

„Կազմակերպութեան անդամ կարող է լինել Եւրոպական Տաճկաստանի իւրաքանչիւր բնակիչ, առանց խտրութեան սեռի, կրօնի, ազգութեան և դաւանանքի։

„Ամբողջ կազմակերպութիւնը ղեկավարում է ԿԵՆԴՐՕՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԷՆ։

„Յաչս օտար պետութիւնների, Կազմակերպութեան ներկայացուցիչ հանդիսանում է ներկայացուցչական մի մարմին“։

ԹԵՐԹՕՆ

ԿԱՂԱՆԴԻ ԸՆԾԱՆ

Նէր հայ մարտիկներին

1905 թուականի վերջին օրն էր։

Տարեվերջի արևը անցնում էր Մասիսի ետևը և նրա ստուերը իր հսկայական շրջապատով տարածում, ծածկում էր Արարատեան ընդարձակ դաշտը. . .

Քաղաքում, եկեղեցու փոքրիկ զանգակի մեղմ զոզանջիւնը հրաւիրում էր գիւղացիներին՝ տարւայ վերջին աղօթքին։ Վանէս ապէրն էլ, իր սովորութեան համաձայն, շտապեց դէպի եկեղեցի։

Նա գիւղի ամենախելացի և փորձուած մարդն էր

համարում. Նրան լսում էին բոլորը մի առանձին պատկառանքով։

Շատ բան էր տեսել Վանէս ապէրը իր ձիգ ու երկայն կեանքում. դեռ երիտասարդութեան օրերին, ռուսաց տիրապետութեան առաջին շրջանում՝, նա յաջող վկայ էր եղել մահմեդական բռնաւորների, խաների ու բէգերի, անզուսպ վերաբերմունքին դէպի հայ ժողովրդի նահապետական բարքերը. անարդարութեան անթիւ փաստերի դիմաց նա ստէպ խորը զայրութ էր զգացել և, նոյն իսկ երբեմն, մտքովն անցէր կացրել վատ դրացիներից վրէժխնդիր լինել։ Բայց միշտ էլ հաշուի առնելով շրջապատող պայմանները, ուր ամենքը ընական էին գտնում այդ երևոյթները, դարերով սրբագործուած այն փիլսոփայութեամբ, թէ թուրքը անօրէն է, թէ նրա գործած չարութիւնների դէմ չարութեամբ պատասխանելը դէմ է աւետարանի ոգուն և թէ այդ զրկանքներից ազատուելու համար միայն աղօթել պէտք է, Վանէս ապէրն էլ կամաց-կամաց ճնշել, մեռցրել էր իր մէջ ըմբոստացող, բողոքող ոգին և դերի դարձել իր պապերի աւանդական թելադրութեանը։ Քանի քանի անգամներ – աղջիկ փախցնելու, ճամբորդ թալանելու, գիւղի դէղեր հրդեհելու դէպքերում՝—նա եկեղեցի էր շտապել, աղօթել, որ Աստուած նրանց հեղինակներին դարձի բերէ, և դրանով իր խիղճը հանգստացրած տուն վերադարձել։

Մի շարք տարիներ վերջը, մինչ թաթար-թուրքական երբեմնի գազանութիւնները պատմութեան շարքն էին անցել և մինչ Վանէս ապէրը մոռացութեան էր տուել իրեն վրդովող դէպքերի յիշողութիւնները իսկ, յանկարծ որտեղից որտեղ՝ բռնաբաններում դարբնուած՝ թուրքական վերջին բարբարոսութիւններն եկան յուզելու նրա հանգիստը։ Նրա ամբողջ հոգեկան աշխարհը տակն ու վրայ եղաւ։ Քուն չունէր նա։ Օրերով մտածում էր հաշտեցնել կատաղող փաստերը տարիներով կրթած, ամրապնդած իր համոզումների հետ, բայց այդ նրան չէր աջողւում։ Ներքին կռիւ կար նրա մէջ և այդ կռիւը շարունակուեց օրեր, շաբաթներ, մինչև որ նա մի որոշումի հանգեց...

Ու մի օր, վաղ առաւօտ, Վանէս ապէրը կանգնած իր հինաւուրց տան դռանը, փոքրիկ հրապարակում, իր երկայն ու թաւ յօնքերի տակից դիտում էր Մասիսի գագաթը, որ այդ միջոցին պսպղում էր արևի առաջին ճառագայթներից։ Նայեց երկա՜յն ու երկա՜յն, կարծես դեռ չէր կշտացել 72 տարուայ ընթացքում նայելուց։ Բայց այդ օրուայ նայուածքի մէջ ինչ որ խորհուրդ, թռիչք կար։ Աչքերը լցուեցին։

—Հէ՛յ, հէ՛յ, շշնջաց նա, ամեն ինչ անցնում է, միայն դու ես մնում նոյնը, նոյն անսասան, ծեր Մասիսը, անունիդ մատա՜ղ։ Քանի քանի անգամ, նեղ րոպէներին, քեզ եմ դիմել և միշտ էլ դու քո լռութեամբ համաձայն ես եղել հետս։ Հիմայ նոյն լռութիւնը, նոյն համաձայնութիւնն ես տալիս, ես էլ կը կատարեմ։

Ասաց ու մտախոհ ներս մտաւ...

...Երկու ամսից ի վեր՝ հին, երբեմնի ըմբոստացումը իր անզուսպ թափով գլուխ էր բարձրացրել Վանէս ապօր ոգու խորքում։ Նա այդքան ժամանակամիջոցում՝ իր հեղինակաւոր ձայնով արել էր այն, ինչ որ անհրաժեշտ էր նկատել...

Այս անգամ նա յուզուած տաւ եկեղեցի։ Կանգնեց իր տեղը, հասակակից ուրիշ ծերունիների շարքում։ Եկեղեցում կատարող ժամերգութիւնը ոչ մի տարբերութիւն չունէր սովորականից։ Աղօթողները թէպէտ նոյն մարդիկ, բայց այս անգամ տարբեր զգացմունքներով, տարբեր աշխարհայեացքով տարուած՝ սպասում էին ժամերգութեան վերջանալուն։

Ժամը վերջացաւ։ Տէրտէրը „Հայր մերը“ սկսեց և „փրկեա՛ ի չարէ“-ով փակեց։ Կողմնակի մարդիկ ցրուեցին. մնացին գիւղի ծերունիները, բանիմաց մարդիկ՝ Վանէս ապօր համախոհները։ Նրանք ուրիշ, աւելի անհրաժեշտ, մի աղօթք ունէին։

Զզջումի անհրաժեշտութիւնը կապարաբարի պէս ծանրացել էր ամենքի կրծքին. մարդիկ արձանացած էին, նրանց շնչառութիւնը կարծես դադարած։

Վանէս ապէրը վստահ քայլերով առաջ անցաւ և ձեռքերը բարձրացնելով դէպի վեր՝ բարձր ձայնով աղաղակեց.

—Տէր, դարեր ու տասնեակ դարեր է, որ աղօթում ենք քեզ, ամեն օր „Փրկեա՛ ի չարէ“ աղաղակելով, բայց մեր ամբողջ աշխատանքը զուր անցաւ. դու չ՝ուզեցիր կամ չը կարողացար փրկել մեզ չարից։ Նոր տարին գալիս է մեզ դիմաւորելու արիւնի և աւերմունքի մէջ։ Տէր, ներիր, որ այսուհետև այլ ևս չը պիտի դիմենք քեզ՝ նոյն աղաչանքով։ Մենք մեր յոյսը մեզ վրայ դրինք—այդպէս է վճռուած։ Ներիր, որ քո որդու բերանով արգելուած սուրը գտանք մեզ փրկիչ և նրան ապաւինեցինք։ Ներիր մեզ, որ մեր որդոց, տարիներով խոհեմութիւն, համբերութիւն քարոզելու փոխարէն, դրա հակառակը պիտի աւետենք։ Համբերութեան բաժակը լցուած է, այլևս տանել չենք կարող։

Նա լռեց։

—Ամէ՜ն, կանչեցին բոլորը միաբերան, և խորհրդաւոր երկիւղածութեամբ դուրս եկան եկեղեցուց։ Մի ծանր քար կարծես ընկել էր նրանց կրծքից։

Ամենքը շտապեցին դէպի տուն։

Ցանեցիները սպասում էին Վանէս ապօրը՝ կաղանդին դիմաւորելու համար։ Զոր մրգերի սեղանը, ըստ սովորութեան, պատրաստ էր և երեխաները նրա շուրջն էին դառնում։ Նրանց տրամադրութիւնը, միշտ երեխայական, նոյնն էր, իսկ հասակաւորները, Վանէս ապօր որդիքն ու հարսները, հեռու էին տօնական տրամադրութիւն ունենալուց։ Նրանց վրայ խիստ ազդում էր Վանէս ապօր մռայլ դէմքը, որ անսովոր լրջութիւն էր ներկայացնում։

Նրանք գիտէին, թէ գիւղի ծերերը մի քանի անգամ է՝ ժողովւում են, երկար խօսակցում, վիճաբանում ինչ որ խնդրի առթիւ, որ իրենց համար դեռ պարզ չէր։ մի բան միայն պարզ էր, որ իրական փոփոխութիւն կայ նրանց մտածմունքների մէջ. նրանց միշտ խոհուն, լուրջ և կատակասէր լինելուց հեռու կենդանի շարժմունքները աչքի էին ընկնում։ Ամենքն էլ զգում էին, որ նոր-տարին տարբեր է լինելու սովորական նոր-տարիներից։

Գիշերուայ կէսը մօտենում էր։ Վանէս ապօր տանը մրգերի սեղանի երկու ծայրերում յատուկ մոմեր վառուեցան։ Ընծաներ բաժանելու սովորական ժամն էր։

Ծերունու պատուէրի վրայ՝ աւագ որդին մեծ դժուարութեամբ մօտ բերեց մի արկղ, որ նոր էր ստացել։

— Կարծես երկաթից ձուլված լինի, հևալով ասաց նա, արկղը դնելով հօր առաջ։

— Երկաթ լինելուն երկաթ է, որդիս, բայց մարդկանց դարբնելու համար շինված։

Այդ խորհրդաւոր խօսքը հասկանալ դժուար էր, ուստի և ամենքը մի առանձին անհամբերութեամբ սպասում էին արկղի բացուելուն։

Սրտերի բաբախիւնը արագանում էր։

Հանդիսաւոր էր վայրկեանը։

Վանէս ապէրը երկա՜ր, անթարթ աչքով արկղին նայելուց յետոյ՝ նոր ոգի առած սկսեց.

—Որդիք, կաղանդ է. ըստ սովորութեան, այսօր էլ ընծաներ պիտի բաժանեմ ձեզ, բայց չը զարմանաք, եթէ փոխանակ հագուստ, արդուզարդ տալու, մի նոր տեսակ ընծայ նուիրեմ ձեզ։ Երբ ընծան ստանաք, թերևս մտածէք, թէ ես ծերացել ցնդել եմ։ Չէ՞ որ ես էի, որ շարունակ դէմ էի վէնքերի հետ գործ ունենալուն, միշտ ասելով՝ թէ կրակի հետ մի՛ խաղաք, ձեռքներդ կ՚այրուի։ Բայց կեանքի դառն փորձը և այսօրուայ մեր դրութիւնը ինձ ստիպեցին այլ մարդ դառնալ։ Առէ՛ք այդ ընծաները և գիտցէ՛ք պաշտպանել ձեզ և ձեր պատիւը. միայն մի՛ մոռացէք մեծահոգի լինել և ի չարը չը գործ դնել այն միակ միջոցը, որ ձեզ փրկելու է։ Անզէն մարդու վրայ կրակ չ՚անէ՛ք, թոյլի վրայ չը յարձակուէ՛ք, կանանց և երեխաներին չը դիպչէ՛ք, բայց ձեզ չարութիւն նիւթողի նկատմամբ անխնայ եղէ՛ք։

Վերջացրեց, բաց արեց արկղը և այնտեղ եղած չորս հրացաններից երեքը տուեց իր երեք որդոց, մէկն էլ կախեց իր գլխավերը „այս էլ իմն է“ ասելացնելով, իսկ ութ ատրճանակները բաժանեց հարսներին, աղջիկներին և հասուն թոռներին։ Յետոյ կանչեց իր բազմաթիւ մանկահասակ թոռներին և նրանց միրգ բաժանեց։

—Երբ՝ մեծանաք, դուք էլ կը ստանաք այսպիսի ընծաներ ձեր հայրերից. մեծացէ՛ք և արժանի եղէ՛ք նրանց։

Գոհ էին ամենքը, գոհ էր և Վանէս ապէրը։

Երբ ուղիղ կէս գիշեր եղաւ, Վանէս ապէրը վերցրեց իր հրացանը և լուսամուտից օդի մէջ կրակեց. սենեակը լցուեցաւ վառօդի ծխով ու հոտով։

—Հոտդ անո՜ղշ, խունկ ու կնդրուկից էլ աւելի, հոտիդ մատա՜ղ, բացականչեց յափշտակուած ծերուկը և իսկոյն պատուիրեց բոլորին դուրս գալ բակը և մի մի անգամ փորձել ստացած ընծաները։ Մի քանի վայրկեանի մէջ Վանէս ապօր բակը հրաձգութեան վայր դարձաւ։

Նոր տարին սկսւում էր կրակով։

Այդ միջոցին գիւղի շատ բակերում նոյնն էր տեղի ունենում։ Վանէս ապօր համախոհները բոլորն էլ այդ օրը նոյն ձևի ընծաներ էին բաժանել իւրայիններին։

1906-ի յունուարի մէկին, վաղ առաւօտից, Ք. գիւղի տղամարդիկ և կանայք զէնքի վարժութիւններ էին անում մօտակայ դաշտում։

Հրացանների դղրդոցը տարածւում էր հեռու հեռու, դէպի բազմաթիւ հայ գիւղեր և շրջակայ ձորերի սովորական լռութիւնը վրդովում իր փոթորկոտ, անվերջ կրկնուող արձագանքներով— ինքնապաշտպանութեան կոչի արձագանքներ, որոնք վառօդի հոտի ու ծխի հետ թռչում էին դէպի ամեն կողմ։

Ու այդ անընդհատ դղրդոցը ոչ ոքի խորթ չը թւաց։ Նա ամենքի սրտից էր խօսում։

Տարին էր այդպէս։

Մ Ա Ր

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

Frankfurter Zeitung-ին հետևեալն են հեռագրում Վաշինգտոնից.

Նախագահ Ռուզվելտ հրատարակեց մի աղերսագիր, որ ուղղել են իրեն Անգլիայի ու Եւրոպայի բազմաթիւ ականաւոր քաղաքացիներ և որով խնդրում են Նախագահին միջոցներ ձեռք առնել, որպէս զի Հապագի միջնորդ խաղաղարար ատեանի առաջիկայ նիստին՝ Հայկական Խնդիրը քննութեան առնի։

Նոյն լուրը Պարիզեան „*Matin*“-ը տալիս է այս ձևով.

„Պ. Ռուզվելտ հրատարակեց բազմաթիւ և ամենայայտնի եւրոպացիների կողմից իրեն ուղղած մի աղերսագիր, որով խնդրում են Նախագահին միջնորդել՝ գումարելու եւրոպական պետութիւնների մի համաժողով, ուր պիտի խորհին ձեռք առնելիք միջոցները թիւրք կայսրութեան մէջ խաղաղութիւն ու անդորրութիւն հաստատելու համար։

Այդ աղերսագրով, որ ստորագրած են մեծ թւով եւրոպացի քաղաքական անձեր, որոնց մէջ Բերթրը, նախկին սենատոր ու Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր, ապա 31 ուրիշ սենատորներ ու ֆրանսիական պարլամենտի 25 անդամներ՝ խնդրում են նմանապէս Ռուզվելտին՝ հոգալ, որ Հապագի Ատեանը իր առաջիկայ նիստում զբաղուի մասնաւորապէս հայկական գործերով և խորհի հարկա որ միջոցները, հայերի վիճակը բարւոքելու համար։ Տակաւին յայտնի չէ, թէ ինչը Ռուզվելտը ինչ պիտի որոշի այդ աղերսագրի առթիւ։

*

Ջ. Էմս Բրայս, ականաւոր անգլիացի հայասէրը, նոր ազատամիտ մինիստրութեան մէջ պաշտօն ստանձնելուց յետոյ, նորերս *Balkan Comittee*-ի մի ժողովում արտասանել է մի ճառ, որով խոստանում է, իբրև մինիստր, շարունակել իր աջակցութիւնը մակեդոնական ու հայկական դատին։

„Դուք չէք կարող չը խոստովանել, ասել է Բրայս իր ունկնդիրներին, որ հայերի տառապանքները աւելի սարսափելի են, քան մակեդոնացիներինը։ Վստահ եմ, ուրեմն, որ ձեր կամքն իր ուժերի համեմատ պիտի աջակցէ Հայաստանի բարեկամներին։ Երկու կազմակերպութիւնները ևս ձգտում են իրագործել մի վեհ նպատակ, մէկը ամենաբարձրը նպատակներից, որ կարող են հետամտել մի մեծ և ազատ երկրի քաղաքացիները։ Դուք չը պիտի միայն զբաղուէք օրուայ մտորութիւններով, այն բռնակալութեամբ ու այն անկարգութիւններով, որոնք այսօր մեր դատումն են յարուցանում, ձեր դործը դերազանցում է դրանցից, որովհետև Դուք հանդիսատես էք նոր ազգերի ծննդեան, ազգեր, որոնք այժմ փոքրիկ են ու թոյլ, բայց որոնք թերևս մի օր կը լինեն հզօր ուժեր, քաղաքակրթութեան ու ազատութեան համար աշխատող... Ես չը պիտի հրաժարւեմ այդ վեհ նպատակի մտահոգութիւնից և պիտի օգնեմ ձեզ, իմ իշխանութեանս տակ եղած բոլոր միջոցներով“...

*

Պետերբուրգի աբիւնատ կիրակի տարեդարձի առթիւ՝ ներկայ յունուարի 21-ին ամբողջ Եւրոպայում տեղի ունեցան մասսային ցոյցեր, կազմակերպուած սոցիալիստական կուսակցութիւնների կողմից և Բրիւսէլի միջազգային Սոց. Բիւրոյի հրահանգով։ Ամեն տեղ սոցիալիստ հռետորները շեշտում էին իրենց ճառերի մէջ այն միտքը՝ որ Ռուսաստանի պրոլետարիատի պարտութիւնն ու յաղթանակը համաշխարհային բանւոր ընդհանրութեան պարտութիւնն ու յաղթանակն են, քանի որ ռուսական բռնապետութեան դոյութիւնը տակաւին համարւում է մի հզօր խոչընդոտ՝ Սոցիալական Յեղափոխութեան համար, ամբողջ Արևմուտքում։

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱԶԴԵՐ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆՆԵՐ

Այս դառն ու արիւնալից օրերում Հ. Յ. Դաշնակցութիւնը նորից կոչ է անում հայ ու թուրք ժողովրդին։ Նա դիմում է ձեզ, աշխատաւոր ժողովուրդ, ձեզ, որ կրծքի վրայ տանում էք ասնջանքի ու ցաւի բեռը, ձեզ, որ քամում էք դաւաճանների ու ոճրագործների եղբայրասպան յանցանքի դառնութիւնը։ Եւ ասան ամիս է, որ սկսել է եղբայրասպան կռիւը, երկուստեք ոչնչացումը, ասան ամիս է, որ մեր հայրենիքի ամեն մի անկիւնում, ինչպէս փոթորիկ, անցնում է աւերածութիւն, հրդեհ, թալան ու կողոպուտ։

Նոյն փոթորիկն է, որ այսօր կախուած է նաև Թիֆլիզի հայ ու թուրք աղգաբնակութեան գլխին, ոպառնալով այնքան անմեղների։ Հերիք է այսքան անմեղ զոհեր ու արիւն, որի դէմ բողոքում է մարդկային զգայմունքը ու խիղճը։

Երեկուայ ու այսօրուայ դէպքերի ու զոհերի առթիւ մենք յայտնում ենք մեր ցաւն ու վիշտը։ Միաժամանակ կոչ ենք անում երկու ժողովրդներին էլ՝ չկրցնել սառնարիւնութիւնը ու զոհ չը դնալ ոճրագործ պրովոկացիայի։

Հ. Յ. Դաշնակցութեան Թիֆլիսի Կ. Կոմիտէ

23 նոյեմ.

*

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Թիֆլիսի Ինքնապաշտպանութեան Կենտրոնական Մարմինը խստիւ պատուիրում է, որ ոչ ոք չը համարձակուի անցորդներին խուզարկել, զէնքերը խլել կամ բռնել և բանտարկել, եթէ նրանք հարբած՝ անկարգութիւն չեն անում կամ զէնքը հանած՝ խռովութեան և յուզմունքի տեղիք չեն տալիս։

Զինուորական դատի կենթարկուեն մեր զինուորներից նրանք, որոնք հրաղէն կը պարպեն անմեղ և խաղաղ քաղաքացիների վրայ։

Հ. Յ. Դ. Ինքնապաշտպանութեան Կ. Մարմին։

*

Թիֆլիսի աղգաբնակութեանը.

Երէկ, 23 նոյեմբերի, ամբողջ օրուայ ընթացքում Հ. Յ. Դաշնակցութեան Թիֆլիսի կազմակերպութիւնը իր բոլոր ուժերով աշխատեց զսպել ժողովրդական զայրոյթը և բոպէ առաջ վերջ տալ վրդովեցուցիչ սպանութիւններին։ Եւ շնորհիւ դրան յաջողեց ամբողջ դիշերը խաղաղ անցնել։ Առաւօտ վաղ կազմակերպութեան կամաւորները յորդորում էին աղգաբնակութեան խանութները բանալ և սովորական զբաղմունքներով պարապել։ Ժամը 8 և կէսին մի խումբ հայեր մտան Թուրքայ Թաղը, հաւաքելով Թուրքերին սկսեցին համոզել նրանց՝ որ վերջ տան կռուին, որի վերաբերմամբ կայացաւ հմտաձայնութիւն։ Այդ խօսակցութիւնից յետոյ՝ Թուրքերը կամաց-կամաց հեռացան հայերից և երբ հայերը մնացին առանձին, շրջակայ Թուրքերի տներից յանկարծակի հրացանաձգութեան բռնեցին փողոցում գտնուող հայերին և սպանեցին մէկին ու վիրաւորեցին 3-ին։

Այսպէս ուրեմն մի անգամ ևս մեր դրացի Թուրք ամբոխը դաւաճանեց իր խօսքին։ Սրանով պարզ է, թէ ում վրայ է ծանրանալու գալիք աղէտների պատասխանատուութիւնը։

Հ. Յ. Դաշնակցութեան Թիֆլիսի Կ. Կոմիտէ

24 նոյեմ.

*

Ի նկատի ունենալով երէկ քաղաքում պատահած մի շարք սպանութեան ու կողոպուտի-քամելի դէպքերը, հարկ ենք համարում յիշեցնել հասարակութեան, որ ինքնապաշտպանութեան նպատակն է միմիայն պաշտպանուել, երբ տեղի կունենայ յարձակում խաղաղ ու անմեղ քաղաքացիների անձի և գոյքի վրայ։ Վնասել խաղաղ քաղաքացիներին, բարբարոսներն վայել միջոցների դիմել՝ թալանել, կողոպտել ու հրդեհել՝ ամենախիստ կերպով արգելւում է։

Իսկ մեր զինուորներին հրամայում ենք հետևել ու ձերբակալել յանցաւորներին և յանձնել Կ. Կոմիտէիս։

Հ. Յ. Դաշնակցութեան Թիֆլիսի Կ. Կոմիտէ

24 նոյեմ.

*

Հ. Յ. Դաշնակցութիւնը յայտնում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ նա ստացել է ռուսաց սոցիալ-դեմոկրատական բանուորական կուսակցութեան Թիֆլիսի կոմիտէից հետևեալ ծանուցումը.

„Ի նկատի ունենալով, որ բուրժուը բացին պատերազմական գործողութիւններ, որ արտայայտւեց նրանց հրանգութեամբ մեր պահակների վրայ առանց որևէ առիթի մեր կողմից, որի ժամանակ սպանուց մէկը եւ վիրաւորուեցին երկուսը մեր բնակիչներից, մենք վերցրինք մեր պահակները եւ դրանով վերացնում ենք մեզանից որևէ պատասխանատուութիւն ապագայ դէպքերի համար։"

Եւ այսպէս Սոցիալ-Դեմոկրատական կուսակցութեան ջանքերը՝ վերականգնել խաղաղ յարաբերութիւններ Թուրքերի և հայերի մէջ՝ ապարդիւն անցան դժբախտաբար։ Եւ այդ փաստը մի անգամ ևս ապացուցեց, թէ Թուրքերը ամեն տեղ և միշտ հանդիսացել են յարձակող կողմ և նրանց յանձն առած բարոյական պարտաւորութիւնները երբէք դին չեն ունեցել։ Եւ այս անգամ ևս ազգերի եղբայրութեան և խաղաղութեան գաղափարի համար կռուող Սոց.-Դեմոկ. կուսակցութիւնը միւս յեղափոխական կազմակերպութիւնների հետ միասին հանդիպեց խոշընդոտի ագրէսիվ տրամադրուած Թուրք խուժանի կողմից։

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը բոլոր ջանքերը դրած կը դնի հարկաւոր դիմադրութիւնը անելու Թուրքերի ագրէսիվ գործողութիւններին։ Միևնոյն ժամանակ նա յայտնում է, որ մեր կուսակցութեան կողմից ձեռք առնուղ բոլոր ակտիվ միջոցների միակ նպատակն է խաղաղութիւնը շուտափոյթ վերականգնել և դադարեցնել այն բռնութիւնները, որ Թուրքերի պատերազմիկ մասը գործում է խաղաղ աղգաբնակութեան դէմ։

Այդ պատճառով Դաշնակցութիւնը յայտարարում է ի գիտութիւն ընդհանուրի.

1. Ամեն մի բռնութիւն խաղաղ և անզէն Թուրքերի վրայ՝ կը հալածուի, իսկ նրանց գոյքը թէ խանութներում և թէ տներում չը պահւեն։

2. Ընդհարումների շրջանից դուրս զինաւորուած Թուրքերը մինչև խաղաղութեան վերականգնումը զինաթափ կանուեն մեր կուսակցութեան կոմիտէից լիազօրութիւն ունեցող անձանց ձեռքով։

3. Մինչև Թուրքերի կողմից յարձակումները դադարեցնելը, նրանց անցնելը, չէզոք շրջանից պատերազմական շրջանը, չէ թոյլատրվում։

Հայ Յեղ. Դաշնակցութիւն

28 նոյեմ.

ՄԵՐ ՇՐՋԱՆԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

(Շրջաբերական նամակ)

„Բէնդէր" խմբի անդամներից Մ... իր անուղղելի վարք ու բարքի, նամար (վերին ասիճանի խայտառակ օրինակ է տալ վերցրու, հարբելով եւ մի ամբողջ օր այդ վիճակում ընկերների եւ ծանօթների վրայ հրազէն արձակելով՝ սպառնացել է բաղամում շփոթութիւններ առաջացնել), հեռացած է նոյն խմբի անդամութիւնից։

Յեղափոխական գաղափարը, որպէս եւ նրա մարմնացնող յեղափոխակ. գործը լինելով սրբազան եւ ամենաանիրականը բոլոր գործերից այդ գաղափարի իւրամանչիւր զինուորից պահանջւում է անպայման ազնուութիւն, վարք ու բարքի անաղարտ մաքրութիւն եւ ամենարնչիր հակումներ։ Հակառակ սրանց, վերոյիշեալ անօրինակելի վարմունքը առիթ է տալիս Կենտրոնակ. Կոմիտէիս՝ սրանով միանգամ էլ յորդորելու մեր շրջանի դաշնակցական ընկերներին, լինել վարք ու բարքով անպայման մաքուր եւ օրինակելի, բարձր պահելով յեղափոխականի անունը եւ նրա դրօշակը. անձի օրինակով ուսխարել խստացնել արժանաւոր, գիտակից եւ նիւրուած յեղափոխականների շարքերը, ուշադրութիւն դարձնելով յեղափոխականի բաջութեան, յանդգնութեան եւ մտաւոր ընդունակութիւնների հետ՝ առաւելապէս եւ նրա ազնուութեան եւ

բարոյական առաւելութիւնների եւ առաքինութիւնների վրայ: Եւ այն ժամանակ նասարակութիւնը, որ լաւն եւ շիտակը նանաչելու մաքուր բնազդն ունի՝ գիտէ իր կարգին անսանման խանդավառութիւն ցոյց տալ դէպի ազնիւ գործ եւ ընդհակառակն՝ իր արդար զայրոյթն արտայայտել դէպի ամեն մի անարժան վարմուրք:

ՎՐԺԺԻ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

ՆԻՒԹԱՏՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Միւրոն ստացած՝

Ռուսաստան.—„ԴՐԱՄ“ կոմիտէէն 5000 մր.

Գերմանիա.—Տիւբինգէն՝ Ա. Թ.-էն ի նպաստ „Հայ Ուսանող. Ռազմական մօնդի Կովկասում“ 12 մր. 30 ս.

Ֆրանսիա.—Պարիզ Ա. Ռ.-էն նւէր 50 մր.

Եգիպտոս.—Ալէքսանդրիա „Մօսինի նրատանից“ նւէր 60 մր.

Ընդհ. գումար 5122 մր. եւ 30 սանթիմ:

Պարմանեան Կենտ. Կոմիտէն՝

№ 13-ի շարունակութիւնը.

ԹՈՒԼՈՒԶԱՅԻ խումբերէն՝ ի հաշիւ 1904 (յուլիսէն—դեկտեմբեր).—Անդրանիկ 21 մր. 40 ս. Սերոբ-Աղբիւր 35. 75, Հրայր 25, Պատանի 12: Գումար 114 մր. 15 սան.

ՊՐԱՒԼԱՅԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ՝ Առիւծ խ. 30 մր. Կարմիր Լեռ 33, Գուրգէն խ. 51, Ագիզ 31, Նիհար խ. 33, Անդրանիկ խ. 36, Բանւոր Պետրոսի միջոցաւ հաւաքուած 35, Մ. Զ. եւ Մ. Բ. 40, Մ. Սարամ 5, Կվար 2, Ծաղիկ 2· Գումար 297 մր.

Ծանօթ.— նոյն ենթակոմիտէն 1904 տարեան երջանի մէջ 600 մր.

Ընդհանուր գումար 3398 մր. 70 ս. ոսկի եւ 1875 լէվ 5 ս. արծաթ:

Ապառաժի Կոմիտէն՝

Խմբերից՝ Նեցուկ 50 ռուբ. Արցախ 21, Կովկաս 13, Փարոս 10. 67, Խրան 10, Արազի Դ. 48, Երկաթ 16, Պաղպաս 4. 15, Պատիւ 103 .44, Նամուս 13. Վարազ 34· 50, Գործակատար 200, Կայծ 3. 60, Արարատ 17, Մուրճ 12, Վրէժ 4. 35, Ապակի գ· Անդրանիկ խ. 11. 70, Նոյն գ. Թումանի խ. 17: ՇԱՀԱԿ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ՝ հետեւեալ խմբերից՝ Մուրճ 28. 80, Թնդանօթ 28. 80, Զէյթուն 10. 50, Սասուն 9. 40, Սէր 5. 50, Մուրճ 8, Սարձոր գ. խ. 2, Ցաղթանակ Ա. գ. 10, Խաչէն գ. 8. 50, Մեղրաձոր գ. Ժ. 18. 49, Անապատիկ Դ· 12. 16, Սասուն 17, 60, Իշխանաբերդ Զ. 8. 80, Արեւ 5. 20, Ղարադուման Թ. 8. 67, եւս 5. 75, Զոր գիւղ 4. 70, Կիրճ գ. 8, խմբերից՝ Ծայր Թ. 23. 25, Տիգրանակերտ գ. Է. 21. 62, Վասպուրական ԺԱ. 32. 50, Խարազան գ. Է· 15. 02, Աւեսարան գ· Ժ. 10· 78, Անապատիկ գ. Դ. 9. 35, Շէնիկ գ. 27. 95: ՄԻՋԱԳԵՏԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ՝ Գործիք խ. 8. 20, Բլբլան գիւղից 4. 35, Գերանաձոր գ. 4. 75, Գիւլ գ. 4. 45, Տիզակ խ. 13. 05, Նիկոլ խ. 23. 50, Ղաբար գ. 8. 20. Ծմակին գ. 5. 05, Ցոյս գ. 17. 90, Տապան գ. 2, Բաշիդ գ. 14. 35, Գերանաձոր գ. 2 անձ. 2, Ոսկի Ա. խ. 5. 55, Դաղթավայր գ. 10. Սպիտակ խաչ գ. 26, Գործիք 6. 20, Ոսկի Բ. խ. 11. 25, Ձմեռնակ խ. 9, Շաւարան գ· 11, Բարաղբիւր գ. 4· 75, Ուխտաձոր գ. 8, Գերանաձոր գ. 4. 75, Ծմակին գ· 5. 20, Տապան գ. 2, Գիւլ գ. 4. 45, Նիկոլ խ. 28, Բլբլան գ· 4. 35, Գժոխք խ. 8, Ղաբար գ. 7, Նամուս գ. 10. 28, Նպաս 11, Թոխմար 7. 87, Բարալանջ գ. 3. 40, ՄԻՋ. ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻՑ Փարուն խ. 13· 50, Երամ խ. 5. 60, Յոյս խ. 5. 55, Եռանդ խ. 4. 80, Ոյժ 2. 20, Ապառաժի վանառականներից ամսվն. Ա., Բ. եւ Գ. բաժ. Նեցուկ խ. միջ. 450. Արազի խ. 60. 89, Բարմարոս գ. 30, Վանենեշէն գ· 9, Գէլէգուզան գ· 45, գիւղերից՝ Ծառեղ 17. 04, Բերդ 25. 12, Ստեփանոս 25, Վարդին Խաչ 29. 30, Աղբիւր 8. 50, Զոր 13. 50, Բերդ Ա. 9 6·15, Բերդ Բ. 8. 82, Զաղա 20, Ծառեղ 21. 89, Կրբրբան 43, Մշադէն-ծէն 4. 25, Բեաքակ 5, ԽԱՉԷՆ Բ. մասից.—Սարսափ գ. Ոյժ խ. 1. 50, գիւղերից՝ Մեղրասար 15. 90, Խանասոր 22. 90, Անապատ 15, Վանառ 8, Զանգ 25. 95, Ծակ-Բար 8. 80, Խաչ-Բար 4. 65, Վրէժ 9. 90, Լաչին 9· 15, Մռավ 16. 05, Վարդոս 17. 40, Սարսափ 74. 70: Ապառաժի խմբերից՝ Բաճճի 7. 30, Սարսափ 3. 20, Պողպաս 4. 15, Զրատար 8· 75, Հրազդան 2. 80, Հրայր 15. Կարկուտ 8. 90, Սէր 11. 30, Արցախ 6, Եփրատ 3. 80, Գանձ 4, Անդրանիկ 17. 50, Լոյս 6. 95, Մարտեան 25, Խենթ 20, Կրակ 21· 55, Արազ 44. 44, Կայծ 9, Վազր գ· խ. 13, Վանառականների Դ. բաժ· Նեցուկ խ. միջ· 400, Կղարծէ գ. 15, Պռաթումբ գ. 4, Բրջեմ գրչից 9, նւէր 1.—Նւէրներ Ծառեղ գ. 25, եւս 25, Պ· Թանգից 10, նւէրներ 44. 65, Նեցի գ· 5, Հարսանիքից 5, Բերդաձորի Կարմիր Խաչի խ· 10, Շանակերտում եղեկ. Թումանի յիշ. 8. 25, Տուզանի՝ Աղբիւր գ. 10, Արզեկ Կոցծանի միջ. 13, Բերդ գ. 16. նոյն գ· յանցաւորներից 150, Բերդ Ա գ. 10, Եմիլզան 10, Նեցի 3. 90, Շրջիկ Մուշեղի միջ. Կ. Ս. 3, Գ. Ս. 2, Ն, Գ. 2, Ն քուրի զէնք բաց թողնելու առթիւ 417, Հանգանակութիւն՝ Քինելու գ. 14. 63, Կորաձոր 14, Ծառեղ 50:

Ընդհանուր գումար 3,906 ռուբլի 31 կոպ·

Ծոփաքի Կոմիտէն՝

Մաս մի բան 108 դահ. Փրանց 108, Կաղին 20, Խոշոր Մարդ 20, Կայծ 10, Կարմիր 55, Փայտ 20, Երկաթ 25, Թուղթ 54, Առնի 40: Գումար 460 դահեկան.

Վ.-ի Վ.-ի Կոմիտէն՝

Դարչոյլ 5 օսմ· ոսկի, Ոսկի 5 օսմ. ոսկի, Օր· Զաւդէլ 60 դահ· Զարմայր 40 դահ. Գումար 1180 դահեկան:

Ռոկեհանգի Կոմիտէ՝

Կրակ 24 դր. Վրէժ 24, Շանթ 12, Զէնք 4, Գեղամ 4, Վարուժ 2, Գնել 4, Գառակ 4, Անձնուրացն 28· 5, Ճակ 23, Պալսամ 3 անգամ 57, Եղօ 29, Բարս 29, Թաթուլ, Գ· Մ. Ս. եւ ոմն 19 ականձ 95, Ախոյեան 19, Գիտակ 10, Եզ 4 անգամ 76, Գեղցիկ 30, Մխիթ 99 Արծրուն 2 անգամ 10, Հայկ 2 անգամ 32, Սարեա 52, Դ[illegible] Տ· Թ. 200, Ոսկի 103, Լեռնեռովիս 774, Բանտարկեալներու [illegible]՝ Անձնուրաց 34. 5, Հրայր 20, Պալսամ 5, Ճակ 5, Ախոյեան 8, Պալսամ 9· 5, Լոնդոնաբնակ 888: Համագումար 2753. 5 դահ. ոսկ:

ՀԱՅ ՅԵՂ· ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

		մր. ս.
1.	**Ապատամբական ոգի** (սպառուած)	.10
2.	**Յեղափոխական կեանքից** (սպառուած)	.05
3.	**Դաղտնի տպարան** (սպառուած)	.05
4.	**Գիտական սոցիալիզմ. Ֆ. ԷՆԳԵԼՍ**	.40
5.	**Հայ Յեղ. Դաշնակցութեան Ծրագիր.**	—
6.	**Կուսակցական խմբի արշաւանքը.** (սպառուած)	.20
7.	**Կարճագոյ յիշատակին** (*Զարս հատուած*)	.50
8.	**Հ. Յ. Դ. երկրորդ ընդհ. ժողովի տեղեկագրութիւնը**	—
9.	**Գրքիչներ,** Homo homini lupus, **ՎԱՐԴԳԷՍ**	.20
10.	**Երիտասարդներին. Պ. ԿՐԱՊՕՏԿԻՆ.**	.20
11.	**Ազատութեան հանապարհին. ՂԱՐԻԲ. Ա.** գրոյկ.	.30
12.	**„ „ „ Բ. „**	.60
13.	**Սոցիալական տրամաբանութիւն. ԷՆԳԷՆԻ.**	.50
14.	**Ազատութեան հանապարհին. ՂԱՐԻԲ. Գ.** գրոյկ.	.30
15.	**Հայաստան եւ Մակեդոնիա.**	.50
16.	**Կովկասեան վէրքեր. Է. ԱԿՆՈՒՆԻ.**	3.00
17.	**Հայրենիքի զաղափարը. Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ.**	1.00
18.	**Կազմակերպական կանոններ.**	—
19.	**Դէպի կռիւ. Է. ԱԿՆՈՒՆԻ.**	2.00
	(Կովկաս՝ 1 ռուբլի, Ամերիկա՝ 1/2 դոլար).	
20.	**Յեղափոխականներ. Ս. ՆԻՐՎԱՆԵԱՆ.**	.20
21.	**Նախագիծ Կովկասեան զարծուցիչութեան.**	—
22.	Полвини царизма. В. Араратскій.	.50
23.	**Les tueries de Bakou** A. ARAZI	.20
24.	**Յեղափոխական դաշն.**	.20
25.	**Հ. Յ. Դ. երրորդ ընդհ. ժողովի տեղեկագրութիւնը.**	—
26.	**Նոր Մոսիէսականներին** (թուրքերէն)	.10
27.	**Les Plaies du Caucase** E. AKNOUNI	2.00
28.	**Ազատութեան հանապարհին. ՂԱՐԻԲ. Դ.** գրոյկ.	.40

ՄԵԾԱԳԻՐ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Բարկէնի, Պեսոի, Կարսի, Սերոբի, Վահանի, Հրայրի, Սերոբի եւ որոց. հատը 50 սանթիմ:

„Հայկական Ազատամարտը“ — Ալլեգորի, ճեղ տիպ, խոշոր դիրքով, պատի համար — հատը 1 ֆրանկ:

ԲԱՑ ՆԱՄԱԿՆԵՐ

Յեղափոխական հերոսների պատկերներով, „Հայկական ազատամարտ“ եւ Ֆինլանդիա-Կովկաս. հատը 10 սն.